

## ՏՆՏԵՍԱԿԱՆ ԸՆՏՐԱՆՈՒ ՄԱՍԻՆ

### *Ռուբեն Խուրշուդյան*

Տնտեսական ընտրանին յուրաքանչյուր ժողովրդի սերունդի անքակտելի մասն է, եւ դա օրինաչափ է, եթե նկատի ունենանք այն կարելորդ դերակատարությունը, որն ունի նա: Դեռեւս հնդարիական գրական հուշարձան «Մանուի օրենքներում» հաստատվում էր, որ Արարիչը տնտեսական խավը ստեղծել է իր ազդերից՝ դրանով իսկ ընդգծելով նշյալ խավի դերը՝ որպես հասարակության հենք: Ըստ արիների, ինչքան ամուր եւ առողջ են այդ «ազդերը», այնքան կայուն եւ ապահով է հասարակությունը:

Ինչո՞վ է պայմանավորված «ազդերի» հուսալիությունը, մասնավորապես մեզ համար ակտուալ նոր տնտեսակարգի ձեւավորման օրոք: Մինչ այժմ շեշտը դրվում էր միայն օպտիմալ տնտեսական մոդելների ընտրման եւ կիրառման, համապատասխան իրավական դաշտի ստեղծման վրա, մինչդեռ հիմնախնդիրը ունի ոչ պակաս կարելորդ հոգեբարոյական կողմ: Գերմանացի գիտնական Ֆրանց Քելերը այդ կապակցությամբ նկատում է, որ կապիտալիզմի ծագման համար որոշիչ է «բարոյական ուժերի այն ֆոնդը, որը ձեռներեցի մոտ գտնում է իր տնտեսական իրացումը: Բարոյական ուժերը երկարատեւ դաստիարակության արգասիքն են եւ հետագայում ժողովրդի մեջ կազմում են հիմք՝ պայմանագրերի համակարգի համար, որի վրա է կառուցվում ձեռներեցային գործունեությունը»:

Որո՞նք են այդ բարոյական ուժերը: Բենջամին Ֆրանկլինը՝ ԱՄՆ եւ Եվրոպայի պատանի կապիտալիզմի մեծ դաստիարակը, որպես իդեալական ձեռներեց պատկերացնում էր *աստվածապաշտ պարկեշտ մարդու*, որի գլխավոր հատկանիշն է *ֆինանսական հուսալիությունը*՝ հիմնված ազնվության, աշխատասիրության, խնայողության, կարգուկանոնի ձգտման, օրինապահության, զգուշավորության եւ կռահողության վրա:

Նման նկարագիր ունեցող ձեռներեցը, ըստ ռուս վտարանդի իմաստասեր Իվան Իլյինի, ներդնում է սեփական կապիտալի մեջ ինքն իրեն եւ իր հոգեւոր արժեքները՝ դարձնելով այն *սեփական անձի շարունակությունը*: Գերմանացի մտածող Մաքս Վեբերը, վերլուծելով կապիտալիզմի երեւույթը, ընդգծում է, որ ամենուրեք, որտեղ հայտնվում է կապիտալիզմը, նպաստում է այն մարդկանց բարգավաճմանը, ովքեր համակված են առաջին հերթին դրա բարոյական սկզբունքներով:

Ճակատագրի բերումով շուկայական տնտեսությունը մուտք գործեց արեւելահայ միջավայր երկու անգամ՝ սկզբում XIX դարի երկրորդ կեսերին, հետո՝ XX դարի վերջին: Առաջին մուտքի մասին փայլուն դատողություններ է թողել մեծ վիպասան Ալեքսանդր Շիրվանզադեն իր հրապարակախոսական հոդվածներում: Ուշագրավ է համադրել մեր գրողի դիտարկումները վերոհիշյալ օտարազգի գիտնականների կարծիքների հետ:

Շիրվանզադեն գրում է, որ Ռուսաստանը հայ գործարարի համար մի կենտրոն է, որտեղ նա շփվում է օտար, ավելի քան ինքը՝ «լուսավորյալ» տարրերի հետ եւ ընդօրինակում նրանց վարքը: Սակայն այդ օտար ազդեցությունը, եթե մասամբ նպաստավոր է հայ գործարարի ներքին կյանքի համար, նույնքան եւ վնասակար կողմեր ունի, որոնք են շռայլություն, հեշտամոլություն եւ այլն: Հայ գործարարը այնքան բարոյական զարգացում չունի, որ կարողանա վնասակարը օգտակարից, անբարոյականը բարոյականից զանազանել. իր կենսական պահանջները լրացնելու ասպարեզում նա այնքան հեռու է գնացել, որ հասնում է մինչեւ վերին աստիճանի քստմնելի եւ զգվելի միջոցների: *«Հեշտամոլություն եւ անսանձ կենդանական կրքեր—ահա այդ բարոյական հրեշների կյանքի միակ ղեկավարը թե՛ Ռուսաստանում, ուր արդեն պատրաստի է նրա համար գործելու ասպարեզը, եւ թե՛ հայրենիքում, ուր իրենք են աշխատում հետզհետե ստեղծել այդպիսի ասպարեզ»:* Անձնական շռայլ հաճույքների լրացնելը պահանջում է նյութական շռայլություն-ծախս: Ով որ հարստությունը ձեռք է բերել երկար տարիների ընթացքում գործում դրած աշխատանքի եւ թափած քրտինքի միջոցով, նա թանկ է գնահատում իր հարստությունը եւ նյութական խնայողությունից ստիպված՝ կարողանում է զսպել կրքերը եւ ազատ մնալ ավելորդ շռայլությունից: Իսկ ով հարստությունը ձեռք է բերել համեմատաբար կարճ ժամանակվա ընթացքում եւ հեշտ աշխատանքով, աջ ու ձախ վատնում է իր փողերը, եւ ահա թե ինչու նա իր հեշտությամբ ձեռք բերած հարստությամբ տակավին չլացած՝ չգիտե հաճույքները լրացնելու միջոցների մեջ խտրություն դնել: Նրա հոգեկան բարձրագույն զվարճությունը—հեշտախոսությամբ եւ անասնական ոգեւորությամբ ուտել-խմելն է: Ընկերների առջեւ նա շփանում է իր պղծասիրությամբ, անառակությամբ, օտարների մոտ երբեք չգիտե ո՛չ իր անհատական եւ ո՛չ ազգային արժանավորությունները մաքուր գույներով ներկայացնել: Ձզվելի է նա, երբ հանդիպում է կին հասարակության: Այստեղ նրա խելքը եւ սիրտը չեն կարողանում արտահայտել ո՛չ մի մաքուր ձգտում, ո՛չ մի անկեղծություն:

Չափազանց դիպուկ է վիպասանի կողմից տրվող նման տիպի գործարարի հասարակական վարքի բնութագիրը: Հանկարծակի հարստացած գործարարը *«ընկերային կյանքում կոպիտ, հանդուզն, ինքնագոհ եւ*

համառ է: Նա շատ քիչ հասկացողություն ունի հասարակ քաղաքավարության մասին եւ եթե այդ կողմից կարողացել է մի բան ընդունել քաղաքակրթված օտարներից, դա մի քանի արտաքին աննշան ձեւեր են հազուստի, շարժողության եւ այլ այդպիսի չնչին բաների վերաբերությամբ»: Սակայն այդ արտաքին փոփոխությունները եւս միասին գումարած ներկայացնում են շատ անգամ հույժ ծիծաղելի պատկեր: Ծիծաղելի պատկեր են ներկայացնում եւ նրա շարժվածքը, խոսակցության եղանակը, երբ նա գտնվում է հասարակության մեջ: «Այնտեղ ակնհայտ երեւում են օտարներից կապիկությամբ գողացած արտաքին ձեւերը, որոնք այնքան սազ են գալիս նրան, որքան կարող են սազ գալ, դիցուք, ակնոցները խոզին»:

Ինչպե՞ս էր տեսնում Շիրվանզադեն ժամանակի հայ գործարարի մասնագիտական հատկանիշները: «Փերեզակ - մանրավաճառը՝ կոպիտ, խաբեբա, լկտի: Հարուստ խանութպանը՝ շողոքորթող, օրական հարյուր անգամ աստուծո անունով երդվող եւ հինգ հարյուր անգամ նույն աստուծո դեմ մեղանչող: Կապալառուն՝ խարդախ: Դրամատեր-տոկոսակալը՝ անխիղճ տոկոսներով յուր պարտապանների կաշին բութ դանակով քերթող... Սուտ ասել, խաբել՝ առանց այս երկու զենքերի հայ վաճառականը ինչպես յուր հայրենիքում, նույնպես եւ օտար երկրներում գործել չգիտե: Ով որ պարզամիտ է,- նա հիմար է, իսկ ով որ հիմար է, նա պիտի հարստահարվի - ահա այն մութ մտավոր ընդունակությունը»:

Սակայն ինչպես կարելի է համատեղել այս տխուր նկարագիրը հայ ձեռներեցների բարեգործության անհերքելի փաստի հետ: Շիրվանզադեն այդ կապակցությամբ նշում է, որ եթե ձեռքը գրպանը տանելիս՝ «բարեգործի» գլխում ծագում է այն միտքը, թե կարող է իր տվածով փառք եւ բարեգործի անուն վաստակել կամ եթե մտածում է, թե այն մարդը, որին նա օգնում է, պիտի խոնարհվի իր առջեւ, այն ժամանակ նա բարեգործի աստիճանից անպայման գլորվում է եւ ընկնում վաճառականի աստիճանը, քանի որ կամենում է իր տվածի դիմաց ստանալ:

Գրողի կարծիքով, «նախ եւ առաջ ճրագով պիտի որոնել մի այնպիսի վաճառական, որ բարեգործություն արած լիներ կամավոր կերպով, առանց ստիպման մի անձնավորության կողմից»: Միշտ կամ հարկավոր է ժամերով քարոզ կարդալ վաճառականի գլխին, որ վերջապես, նրա օգնություն հատկացնելու համար կարճ ձեռքը ձգվի մինչեւ գրպանը, կամ հարկավոր է բարեգործության փոխարեն նրան անմիջապես խոստանալ մի դրական վարձ, քանզի նա մտածում է այսպես. «Արդյոք ի՞նչ մի օգուտ կլինի ինձ, եթե այսինչ կարոտյալին օգնեմ»: Եվ այդ դեպքում մեծ նշանակություն ունի այն անձնավորությունը, որը դիմում է հօգուտ կարոտյալների՝ վաճառականի օգնության: Վաճառականը, հաճախ, զեք

մի բան տալիս է, տալիս է ոչ թե գործի համար, այլ այն մարդուն, որը դիմում է նրա օգնությանը, այդ եւս այն դեպքում, երբ դիմողը մի հայտնի մարդ է, որից նա մի որեւէ ակնկալություն ունի:

Այդ ամենին Շիրվանզադեն հավելում է մեկ այլ կարեւոր համգամանք՝ շեշտելով, որ երբ վաճառականը *«նվիրում է մի բան, առաջին պայման. նա պահանջում է, որ հռչակվի իր նվիրածը ի գիտություն աշխարհի, որպեսզի նա կարողանա մեր ամեն ինչ արտաքին փայլով գնահատող հասարակության աչքում կոպեկանոց փառք վաստակել, որպեսզի հոգաբարձուի, եկեղեցաշենի, դպրոցաշենի, որդեգիր պահողի, ազգային խնամակալի, վերջապես, բարեգործի անվան արժանանա»*:

Շիրվանզադեն, իհարկե, տալիս էր հայ տնտեսական ընտրանու «միջին վիճակագրական պատկերը». անշուշտ, այդ առումով կային բացառություններ, բայց նրանք, ավաղ, աննշան տոկոս էին կազմում:

Նման «ազդեր» ունենալով՝ հայ ժողովուրդը պարտություն կրեց ազգային-ազատագրական պայքարում, չկարողացավ ոչ միայն ազատագրել Արեւմտյան Հայաստանը, այլեւ կորցրեց Արեւելյան Հայաստանի մի մասում ձեռք բերված անկախ պետականությունը: Գարեգին Նժդեհը, համեմատելով հրեական եւ հայ ազատագրական շարժումները, այդ կապակցությամբ գալիս էր եզրակացումների, որոնք եզակի են հայոց պատմափիլիսոփայության մեջ: Իրեն բնորոշ խորաթափանցությամբ նա լուսաբանեց հրեաների հաջողության պատճառները՝ անաչառորեն արձանագրելով, որ նրանց համար *«արդար է հարստանալու տենչը, հարստությունը, բայց դա ոչ թե որպես նպատակ, այլ որպես միջոց՝ զայն Իսրայելի դատին ու ազդեցության ծառայեցնելու համար: Եվ հենց այդ է պատճառը, որ հրեությունը այսօր տեր է մի անպարտելի ուժի - ոսկու եւ խելքի եղբայրության - իր ծոցի մեջ»*:

Եվ ընդհակառակը, վերլուծելով հայոց ազգային աղետի պատճառները՝ Նժդեհն ընդգծում է, որ *«մեր պատմության ընթացքում մեծահարուստ հայր չեղբայրացավ հայ մտավորականին, ո՛չ էլ ազգերի բախտի հետ խաղացող ուժերի բարեկամությունը փնտրեց... Ոսկեքսակ հայր չկանգնեց ոսկեգրիչ մտավորականի թիկունքում, եւ այդ վերջինի լեզուն՝ կարճ, խոսքն անլսելի եղավ միջազգային արեոպագների համար: Եվ եղավ այն, ինչ որ եղավ»*:

Շուկայական հարաբերությունները երկրորդ անգամ Հայաստան մուտք գործեցին, ինչպես նշեցինք, XX դարի վերջին, Հայաստանի անկախացումով: Այդ գործընթացը բնականորեն զուգահեռավորում էր տնտեսական խավի եւ վերջինիս ընտրանու ձեւավորմամբ: Թվում էր՝ այս անգամ մեր տնտեսական ընտրանին պիտի զերծ մնար այն արատներից, որոնք բնորոշ էին այդ սոցիալական խմբին XIX դարում: Սակայն ցավով պիտի

խոստովանենք, որ այն ժամանակների համեմատ գրեթե բան չի փոխվել, արդի տնտեսական խավը ժառանգել է իր նախորդի բոլոր բացասական գծերը: Հայ գործարարի համար շուկայական տնտեսության դասական էթիկան մնում է խորթ եւ անընդունելի: Դրանով իսկ հերթական անգամ վերահաստատվում է շվեյցարացի մեծ հոգեվերլուծաբան Կարլ Գուստավ Յունգի հնատիպերի մասին տեսության ճշմարտացիությունը, համաձայն որի, գոյություն ունի ազգի կոլեկտիվ ենթագիտակցական, որի ընդերքում հավերժորեն բնակվում են ժողովրդի կյանքում տարբեր ժամանակ երեւան եկած հոգեմտավոր կերպեր եւ վարքային տեսակներ, հնատիպեր: Վերջիններս միշտ ձգտում են դուրս գալ «ջրի երես», այսինքն՝ գիտակցության ոլորտ, սակայն առողջ բանականության եւ ամուր կամքի առկայության պարագայում, ազգային գիտակցությունը զտում է ենթագիտակցականի բովանդակությունը՝ թույլ տալով մուտք գործել իր ոլորտը միայն ազգային օրգանիզմի համար օգտավետ հնատիպերի:

Համաձայն «Օլիգարխները Հայաստանում» ծավալուն ուսումնասիրության (կատարված Հայաստան-2020 նախագծի շրջանակներում), տնտեսական ընտրանին ընկալում է պետությունը եւ նրա հաստատությունները որպես մի վտանգավոր ուժ: Ավելին, այդ ընտրանին պատասխանատվություն չի զգում երկրի եւ ազգի ճակատագրի համար: Իսկ դա արդեն ազգային անվտանգության անհետաձգելի խնդիր է:

Նախնական կարգով արդեն կարելի է ուրվագծել այս խնդրի մոտավոր լուծումները. պետության կողմից հովանավորչական մոտեցում այն գործարարներին, որոնք զերծ են «կուպեցական» սինդրոմից, հասարակության կողմից անզիջում պայքար «կուպեցական» բարքերի դեմ: Սակայն նշյալ լուծումներին հասնելու համար կա երկու չափազանց կարեւոր նախապայման. եւ պետությունը, եւ հասարակությունը իրենց էությամբ եւ բովանդակությամբ անհրաժեշտաբար պիտի լինեն ազգային: *Միայն ազգային պետության եւ հասարակության առկայության պայմաններում կարող են ձեւավորվել իրապես ազգային տնտեսական խավ եւ վերջինիս ընտրանին:* Միայն այդ դեպքում ազգը, վստահելով իր «ազդրերին», ամբողջով կկանգնի ոտքի եւ, վերցնելով պատմական առաքելության ոչ թեթեւ բեռը, կքայլի առաջ՝ դեպի պատվավոր ապագա:

**ՀՅՈՒՄԻԱՆԱՅԻՆ ԿՈՎԿԱՍԻ  
ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ  
Արսեն Հակոբյան**

Հյուսիսային Կովկասում կատարվող իրադարձությունները ոչ միայն իրենց անմիջական անդրադարձն են ունենում տեղի հայության վրա, այլև այս կամ այն կերպ շոշափում են ՀՀ շահերը: Եթե միայն նկատի ունենանք, որ այստեղով են անցնում Հարավային Կովկասը Հյուսիսայինի հետ կապող հիմնական ուղիները եւ իրենց համապատասխան հացի խնդիրը հոգալու համար ներկայումս այստեղ բնակվում են ՀՀ հազարավոր քաղաքացիներ, ապա խնդրի կարեւորությունը ակնհայտ է:

Տարածաշրջանի ներկայիս իրավիճակը, կոնֆլիկտածին բազմաթիվ եւ հնարավոր օջախների առկայությունը պահանջում են, որպեսզի ՀՀ-ն առանձնահատուկ ուշադրություն եւ մոտեցում ցուցաբերի Հյուսիսային Կովկասին, այստեղ բնակվող հայության խնդիրներին, որ ապագայում հերթական «անկանխատեսելի» իրադարձությունների հետեւանքով մեր հայրենակիցները չհայտնվեն «զոհի» եւ «փախստականի» կարգավիճակում:

Ինչպես արդեն նշեցինք, Հյուսիսային Կովկասով են անցնում ՀՀ-ն սնուցող հիմնական կոմունիկացիոն ուղիները, եւ դրանց շուրջ հայկական ամուր, կազմակերպված համայնքների գոյությունը ապահովության լրացուցիչ երաշխիք է եւ անմիջականորեն բխում է ՀՀ կենսական շահերից:

Սույն հոդվածը պատրաստվել է Հյուսիսային Օսիայում եւ Ստավրոպոլի մարզում այս տարվա օգոստոսին մեր կատարած դիտարկումների հիման վրա:

**Հյուսիսային Օսիա**

2001թ. տվյալներով Հյուսիսային Կովկասում բնակվում էին մոտ 500 հազար հայեր, եւ 1989թ. համեմատ մեր հայրենակիցների թիվն այս տարածաշրջանում ավելացել է ավելի քան 40%-ով: Դա արդյունք է վերջին տասնամյակին ՀՀ-ից տեղի ունեցած արտագաղթի, Ադրբեջանից եւ ԼՂ-ից փախստականության հոսքի:

Հայ բնակչությունը, ըստ պաշտոնական տվյալների, մոտ 52%-ով աճել էր հատկապես «ռուսական սուբյեկտներում» (Ստավրոպոլի,

Կրասնոդարի երկրամասեր, Ռոստովի մարզ), իսկ Յյուսիսային Կովկասի մյուս հանրապետություններում 1989թ. համեմատ հայերի թիվը 25%-ով նվազել է: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ «նվազումը» հիմնականում տեղի է ունեցել Չեչնիայից հայերի լիակատար դուրսմղման եւ Դաղստանում նրանց թվի 15%-ով կրճատման հաշվին: Դրան հակառակ, 1989թ. համեմատ 22% եւ 2001թ. 7%-ով աճել է հայերի թիվը Կաբարդինա-Բալկարիայում եւ Յյուսիսային Օսիայում: 2001թ. Կաբարդինա-Բալկարիայում ապրում էին 4,3, Յյուսիսային Օսիայում՝ 14,6, իսկ Դաղստանում՝ 5,4 հազար հայեր:

2002թ. տվյալներով Յյուսիսային Օսիայում կար 17.147 հայ, որոնց գերակշիռ մասն ապրում է Վլադիկավկազում եւ Մոզդոկում: Պաշտոնական տվյալները վկայում են, որ Յյուսիսային Օսիա-Ալանիա հանրապետությունում հայերը, օսերից, ռուսներից եւ ինգուշներից հետո, թվաքանակով չորրորդն են: Ընդհանուր առմամբ, ըստ 2002թ. տեղեկությունների, հանրապետությունն ունի 710.275 բնակիչ, որից 445.310-ը՝ օսեր, 164.734-ը՝ ռուսներ, 21.442-ը՝ ինգուշներ:

Հաշվի առնելով ՀՀ-ից արտագաղթի ծավալները, ոչ պաշտոնական միզրացիան եւ այլ իրողություններ՝ հայկական բնակչության իրական թիվն, ըստ էության, ավելին է, քան վավերացված է պաշտոնական տեղեկագրերում: Հնարավոր է, որ հայերը թվաքանակով նույնիսկ երրորդ տեղը զբաղեցնեն:

Այս տարածաշրջանում հայկական բնակչությունն է հաստատվել դեռեւս 18-րդ դարում, երբ Ռուսական կայսրությունն իր դիրքերը Յյուսիսային Կովկասում ամրապնդելու համար նպատակաուղղված քաղաքականություն էր վարում՝ այստեղ հիմնվող բնակավայրերը իրեն հավատարիմ բնակչությամբ, այդ թվում եւ հայերով բնակեցնելու ուղղությամբ: Հետագայում պատմաքաղաքական զանազան գործոնների ազդեցությամբ եղան նաեւ այլ միզրացիոն հոսքեր: Վլադիկավկազում, Մոզդոկում հայերը բավական ազդեցիկ դիրքեր են զբաղեցրել տնտեսական, մշակութային, վարչական ոլորտներում: Օրինակ՝ 1891թ. Վլադիկավկազի դումայի 40%-ը հայազգի պատգամավորներն էին: Ծնունդով Վլադիկավկազից են Լիսիցյանների երաժշտական ընտանիքը, հայտնի արտիստ Ե. Վախթանգովը, մոզդոկյան արմատներ ունի քանդակագործ Ե. Քոչարը: Ներկայումս էլ այդ քաղաքներում հիշատակվում են Հայկական թաղամասը, փողոցը:

Վլադիկավկազում առայսօր գործում է Սբ Գրիգոր Լուսավորիչ հայկական եկեղեցին: Հայկական թաղամասը, փողոցը, եկեղեցին գտնվում են քաղաքի կենտրոնում: Ուշագրավ է, որ ստալինյան տարիներին Կենտրոնի կառուցապատման ժամանակ խնդիր է դրվել քանդել եկեղեցին, ինչն

այդպես էլ չի իրականացել: Եկեղեցին գործել է նույնիսկ խորհրդային տարիներին:

Չեոխորհրդային իրողությունները նոր խնդիրների առջև են կանգնեցրել տեղի հայությանը: Հունանիտար եւ սոցիալական հետազոտությունների հյուսիսօսական ինստիտուտի 2001թ. կատարած ուսումնասիրությունները վկայում են, որ հայերի 31%-ը գտնում է, թե հանրապետության էթնոքաղաքական իրավիճակը եւ իրենց դրությունը «հանգիստ» է, 53%-ը՝ ազգամիջյան հարաբերությունները «լարված», իսկ 11%-ը՝ «պայթունավտանգ» է գնահատել: Այս խնդիրները հիմնականում կապված են օս-ինգուշական հակամարտության, չեչենական առաջին եւ երկրորդ պատերազմների հետ: Հարցվածների 49%-ը նշում է, որ «ազգային» պրոբլեմները պետական իշխանության թուլության հետեւանք են: Ինչ վերաբերում է այլէթնիկ միջավայրի հետ հարաբերություններին, ապա 45-47%-ը համարում է, որ «ազգային» հողի վրա իրենց իրավունքները այս կամ այն կերպ ոտնահարվել են, որը կարող է դրսեւորվել ծառայողական, կենցաղային ոլորտներում եւ այլն: Չեոաքրքրական է, որ 2001թ. հետազոտության համաձայն՝ հարցվածների 30%-ը ցանկություն է հայտնել հեռանալ հանրապետությունից, որից 28%-ը՝ Հայաստան, իսկ 26%-ը՝ Ռուսաստանի այլ շրջաններ: Պատճառների շարքում նշվում են բարդ էթնոքաղաքական իրավիճակը եւ ընտանեկան պայմանները:

Այս տվյալները վկայում են, որ կոնֆլիկտածին միտումները ռեալ վտանգ են հանդիսանում Հյուսիսային Օսիայի հայության համար: Իսկ բեսլանյան իրադարձություններից հետո ակնհայտ է, որ պրոբլեմներն ավելի են շատանում: Հարկ է նկատել, որ խոսք չի գնում հակահայկական ծրագրված ու նպատակաուղղված սպառնալիքների մասին, այլ որ ընդհանուր լարվածությունն ու առկա զարգացումները կարող են նման դրսեւորումներ պարունակել:

Դեռեւս ԽՍՀՄ գոյության վերջին տարիներին, երբ ուրվագծվում էր ապագա անորոշությունը եւ ի հայտ էին գալիս առաջին ազգամիջյան հակամարտությունները, Հյուսիսային Օսիայի հայերը ինքնակազմակերպման միջոցներ ձեռնարկեցին՝ դրանում ինքնության պահպանման ու հետագա գոյատեւման հնարավորություններ տեսնելով:

1989թ. լեզվի, պատմության, մշակույթի խնդիրներով մտահոգ ու նախանձախնդիր անհատների կողմից կազմակերպվում է Վլադիկավկազի հայերի «Նաիրի» ազգային ակումբը: 1991թ. այն վերակազմավորվում է «Էրեբունի» ազգային-մշակութային կենտրոնի, որը զբաղվում է Օսիայի տարածքում բնակվող հայերի տարաբնույթ խնդիրներով: Կենտրոնը մտնում է ազգային այլ համայնքները միավորող «Մեր Օսիա» շարժման մեջ, որի միջոցով ակտիվ գործունեություն է ծավալվել՝ տարածաշրջա-



նում եւ հանրապետությունում ծայրահեղական դրսեւորումների կանխման ուղղությամբ: Ներկայումս այն եռանդուն մշակութային գործունեություն է իրականացնում՝ կազմակերպելով տարբեր միջոցառումներ: Գրասենյակում գործում է հայոց պատմության եւ լեզվի դասընթաց, կա գրադարան՝ մոտ 3000 կտոր գրականությամբ: «Էրեբունի» այժմ ակտիվ աշխատում է նաեւ ՌԴ այլ հայկական համայնքների հետ կապեր հաստատելու ուղղությամբ:

Բացի համայնքային խնդիրներից, ըստ էության, «Էրեբունի» ազգային կենտրոնը վերածվել է Վլադիկավկազում Հայաստանի ոչ պաշտոնական ներկայացուցչության, քանի որ բազմաբնույթ խնդիրներ է լուծում Հյուսիսային Օսիայում հայտնված ՀՀ քաղաքացիների համար (փաստաթղթերի թարգմանություն, դրամական, ոստիկանության, իշխանությունների հետ կապված խնդիրներ եւն):

Հյուսիսային Օսիայի մեկ այլ խոշոր քաղաքում՝ Մոզդոկում նույնպես մի քանի հազար հայ է բնակվում: Այստեղ եւս կան հնաբնակներ եւ ՀՀ-ից, ԼՂ-ից, Ադրբեջանից արտագաղթած մեր հայրենակիցներ: Հայերն այստեղ տնտեսական ու պետական ծառայության ոլորտում լուրջ դիրքեր ունեն: Գործում է Ռուսաստանի հայերի միության տեղական մասնաճյուղը, որը ձեւավորվել է նախկինում գործող «Արարատ» կազմակերպության հիման վրա: Համայնքային գործունեության քայլեր են ձեռնարկվում՝ կիրակնօրյա դպրոց եւ այլն: Սակայն, օրինակ, հայկական եկեղեցին տրվել է ռուսներին: Ինչպես նշեցին Մոզդոկում, դեռեւս հնարավորությունները չեն ներում համայնքի ուժերով այն պահելու համար, թեւեւ ռուսական եկեղեցին կառուցելուց հետո խոստացվել է, որ եկեղեցին կվերադարձվի հայերին:

Ըստ էության, ՀՀ համար Հյուսիսային Օսիայի հայկական համայնքի հետ աշխատանքների բավական լայն դաշտ կա՝ լուծման սպասող բազում խնդիրներով: Օրինակ՝ Վլադիկավկազում, Մոզդոկում չի գործում հայկական դպրոց: Հայերենը չի դասավանդվում նույնիսկ որպես ֆակուլտատիվ առարկա: Համեմատության համար նշենք, որ թեւեւ հայերից անհամեմատ քիչ վրացիներ են ապրում Վլադիկավկազում, սակայն գործում է վրացական դպրոց:

Հյուսիսային Օսիայի հայկական համայնքի խնդիրները ՀՀ համար ձեռք են բերում առանձնահատուկ նշանակություն, եթե հաշվի առնենք, որ Վլադիկավկազն ու Մոզդոկը գտնվում են կոմունիկացիոն կարեւոր հանգույցներում: Խնդիրներն, ըստ էության, դուրս են գալիս զուտ «հայկական սփյուռքի» շրջանակից՝ վերածվելով ընդհանրապես տարածաշրջանի նկատմամբ Հայաստանի վարելիք քաղաքականության անհրաժեշտության:

### **Եղեսիա հայկական գյուղը**

Մոզդոկից մոտ 40կմ հյուսիս, Կուրա գետի ափին, ՌԴ Ստավրոպոլի երկրամասում, մարզի եւ Յուսիսային Օսիայի, Չեչնիայի սահմանագծին է գտնվում Եղեսիա հայկական գյուղը, ուր ապրում է շուրջ 6000 հայ: Բացի դրանից, մեծ թվով եղեսիացիներ են բնակվում հարեւան Կուրսկայա շրջկենտրոնում, Մոզդոկում եւ շրջակա այլ գյուղերում: Եղեսիան ոչ միայն սփյուռքային գոյությամբ հայկական մի բնակավայր է, այլեւ ինքնուրույն առանձնահատուկ դրսեւորմամբ, «այլալեզու» հայերի մի ուշագրավ համայնք: Այն կարծես թե դուրս է մնացել մեր հասարակական եւ ակադեմիական հետաքրքրությունների տեսադաշտից, մինչդեռ ինքնատիպ դիմագծով հայության այս բեկորն իր մեջ մշակութային եւ պատմական բազում հետաքրքիր իրողություններ է կրում:

Գյուղը հիմնվել է 18-րդ դարի վերջին, Դադստանի հարավից եւ Այսրկովկասի հյուսիս-արեւելյան շրջաններից գաղթած հայ բնակչության կողմից, որոնք 1796թ. դեպի Այսրկովկաս Վ. Ջուբովի արշավանքից հետո լքել են իրենց բնակավայրերն ու հեռացել Յուսիսային Կովկաս՝ հաստատվելով Ղզլարում եւ շրջակայքում, Սբ Խաչ քաղաքում (ներկայիս Բուդյոնովսկ) եւ Կուրա կամ Կասաեւա - Յամա վայրում:

Հայկական այս խումբը, դեռեւս վաղ միջնադարից բնակվելով Դերբենտի, Մուշկուրի, Ղուբայի շրջաններում՝ այլեթնիկ ու այլակրոն միջավայրում, ենթարկվել էր լեզվամշակութային փոփոխությունների, կորցրել մայրենի լեզուն, դարձել իրանալեզու, եւ 18-րդ դարում արդեն հիշատակվում է որպես թաթախոս խումբ: Թուրքերենը, Արեւելյան Այսրկովկասում լինելով ազգամիջյան հաղորդակցության լեզու, տարածված էր նաեւ հայկական այս բնակչության շրջանում:

Յուսիսարեւելյան Այսրկովկասում եւ Հարավային Դադստանում հայկական այս խմբի հաստատվելը կապված էր դեռեւս վաղմիջնադարյան իրողությունների հետ, երբ 6-րդ դարում Պարսից Խոսրով Անուշիրվան թագավորը Դերբենտի անցքը պաշտպանելու նպատակով իրանական վերաբնակիչներ է բերում այդ տարածքներ՝ նրանց հետ միասին նաեւ «սիսաջանների», այսինքն՝ Սյունիքից տեղափոխված հայկական զինվորական բնակչություն:

Մոտ մեկուկես հազարամյակ բնակվելով այդ շրջատարածքում, ենթարկվելով լեզվամշակութային ծուլումների, կրելով տարածաշրջանում տեղի ունեցած զանազան փոփոխությունների առաջ բերած հետեւանքներն ու ծանրությունը՝ խումբը պահպանում է հայկական ինքնագիտակցությունը, մշակութային նկարագիրը եւ դավանանքը:

Ահա այս բնակչության գերակշիռ հատվածը 18-րդ դ. վերջին հաստատվում է Զյուսիսային Կովկասում: Նրանց մի հատվածը բնակության վայր է ընտրում Կուրա գետի ափը, որի անունով էլ սկզբնական շրջանում գյուղը կոչվում է Դուրա: Այն հայտնի էր նաեւ Դերբենտ, Յայկական գյուղ, Կասաեւա - Յամա անուններով:

1852թ. գյուղը անվանակոչվում է Եղեսիա:

Ներկայումս Եղեսիայի բնակիչները թրքալեզու են: Կենցաղում գործածում են թուրքերեն, «դրսի» հետ շփվելիս՝ ռուսերեն: Գիտական վերլուծությունը ցույց է տալիս, որ խումբը փաստորեն պատմական զարգացումների ընթացքում ենթարկվել է լեզվական ծուլման շարունակական գործընթացների (իրանալեզվություն, թրքալեզվություն): Յետաքրքրական է, որ եղեսիացիների խոսակցական լեզուն անվանում չունի, պարզապես կոչվում է «բիզիմչա», այսինքն՝ «մեր լեզվով», «ըստ մեզ»: Իսկ իրենք իրենց անվանում են «Կուրայլու», այսինքն՝ «ղուրայեցի», «կուրայեցի»:

Եկեղեցական ավանդույթները եղեսիացիների մոտ խոր արմատներ ունեն եւ կարելու դեր են խաղացել համայնքի կյանքում: Դեռ առաջին վերաբնակիչների նախաձեռնությամբ 1802թ. գյուղում եկեղեցի է կառուցվում: 1830թ. հին եկեղեցու փոխարեն կառուցվում է նորը, որը, սակայն, երկար չի դիմանում ժամանակի փորձություններին, եւ 1911թ. եղեսիացիները սկսում են նոր եկեղեցու կառուցումը, որի բացումը տեղի է ունենում 1914թ.:

Խորհրդային տարիների բռնաճնշումներն իրենց հետքն են թողնում նաեւ եկեղեցու եւ նրա ծառայողների ճակատագրի վրա: Վերջին քահանան՝ Վլաս Վլասյանը կամ Տեր Խաչիկը, երկու անգամ ձերբակալվում է, սակայն չի դավաճանում հոգեւոր հովվի իր կոչմանը, այդ իսկ պատճառով 1930-ական թթ. վերջերին աքսորվում է Սիբիր, որտեղ եւ իր մահկանացուն է կնքում:

Չնայած խորհրդային ամբողջատիրության բացասական հետեւանքներին՝ նախնիներից ժառանգած ավանդույթներն ու պատգամները շարունակ եղեսիացիների ուղեկիցն են եղել:

1988թ. դարաբաղյան իրադարձությունները հայկական այս ինքնատիպ համայնքի ազգային ոգու պոռթկման առիթ հանդիսացան: Չնայած դժվարություններին՝ բնակիչների նախաձեռնությամբ վերանորոգվում եւ բացվում է Սբ Աստվածածին եկեղեցին: Յամայնքը հոգում է նաեւ սեփական քահանա ունենալու խնդիրը եւ Յայաստանի համար դժվար տարիներին պատանի է ուղարկում Գեւորգյան ճեմարան: Վերադարձած ու անվանակոչված Տեր Խաչատուրը ներկայումս հովվություն է անում Եղեսիայում:

Յամայնքի կարելուր խնդիրներից է եղել ու շարունակում է մնալ հայ-

կական դպրոցի հարցը: Դեռեւս 1866թ. գյուղում ծխական դպրոց է բացվում, որը 1908թ. դառնում է երկսեռ: Համայնքն ու եկեղեցական իշխանությունները, գիտակցելով յուրահատուկ միջավայրի առկայությունը, միջոցներ են ձեռնարկում, որպեսզի ուսուցչական կադրեր պատրաստվեն հենց տեղի երիտասարդներից:

Հայկական դպրոցը գոյատեւում է մինչեւ 1943/44 ուս. տարին, երբ այն վերածվում է ռուսական դպրոցի, իսկ 1952/53թթ. վերացվում է նաեւ հայերենի ուսուցումը: Միայն 1957թ. համայնքի ջանքերով հաջողվում է վերականգնել հայոց լեզվի դասաժամերը, որոնք նորից ընդհատվում են 1973թ.: Ներկայումս Եղեսիայում հայերեն գիտեն հատուկեւսուցիչներ:

1989թ. համայնքի որոշմամբ, չնայած դժվարություններին, կրկին վերականգնվում է հայերենի ուսուցումը, սակայն կադրային խնդիրների պատճառով այն հաստատուն հիմքերի վրա չի դրվում: Համայնքը մտածում է հայոց լեզվի ուսուցիչ ունենալու համար երիտասարդ գործուղել Երեւան՝ սովորելու, սակայն առայսօր հայոց լեզվի ուսուցման ու ուսուցչի խնդիրը շարունակում է բաց մնալ:

Համայնական կապերը բավական ամուր են եւ փոխօգնության, միմյանց աջակցելու նորմերը Եղեսիացիների կենսակերպի անհրաժեշտ մասն են: Վստահ կեցվածքը, բարձր ոգին, հայրենասիրական զգացումները նույնպես նրանց անբաժան ուղեկիցն են: Չեչենական պատերազմը, տարածաշրջանում տիրող ընդհանուր տագնապի ու զանազան սպառնալիքների մթնոլորտը միայն ամրապնդել են համայնական փոխօգնությունն ու միասնությունը:

Եղեսիացիներն ապրում են «փակ» մշակութային կյանքով, որում պահպանվել են ավանդական կենցաղի բնութագրական շատ գծեր՝ ընդգծված նահապետական նորմեր, հնագույն հավատալիքներ ու ավանդական, անաղարտ պահպանված ծեսեր...

Եղեսիացիները նախանձախնդիր են Հայաստանի հետ կապերի հաստատման, հայոց լեզվի ուսուցումը դպրոցում վերականգնելու, կայուն հիմքերի վրա դնելու գործում, եւ նրանց պատրաստակամությունն ու ջանքերը կարիք ունեն ամենայն աջակցության: Հակառակ դեպքում մենք կունենանք հայությունից կտրված մի ստվար բեկոր, որն աստիճանաբար կհեռանա իր ակունքներից ու կծուլվի օտար միջավայրում:

**ՎՐԱՍՏԱՆԻ ՌԱԶՄԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ  
ՇՐՋԱՆԱԿՆԵՐԸ  
Կարեն Վերանյան**

**ՆԱՏՕ – Վրաստան հարաբերությունների ակտիվացումը**

ՆԱՏՕ համակարգին ինտեգրվելն այսօր Վրաստանի արտաքին քաղաքականության գլխավոր գերակայություններից մեկն է, որի նախապայմաններից են նաեւ երկրի ուժային համակարգը ՆԱՏՕ չափանիշներին համապատասխանեցնելն ու շարժուն զորամիավորումներ ստեղծելը: Ուժային տեսչությունների համապատասխանեցումը ՆԱՏՕ չափանիշներին ինքնին առաջադրում է ՁՈւ օպտիմալացում, զորքերի մոբիլ համակարգի ստեղծում: Հյուսիսատլանտյան դաշինքը Վրաստանի հետ սկսել է մշակել որակապես նոր հարաբերություններ: Ս.թ. հոկտեմբերի 29-ին ՆԱՏՕ ղեկավարությունը վավերացրեց *«Վրաստանի հետ անհատական գործընկերության պլանը»*, որը նախատեսում է երկրի քաղաքականության, անվտանգության եւ պաշտպանության ոլորտների բարեփոխումներ: Դեռեւս հոկտեմբերի սկզբին Վրաստան էր ժամանել ՆԱՏՕ Միջազգային ծառայության պաշտպանական քաղաքականության վարչության պատվիրակությունը՝ Բրյուս Բախի գլխավորությամբ: Հանդիպումների ընթացքում, ի թիվս այլ խնդիրների, քննարկվեց նաեւ երկրի զինված ուժերին ներքին զորքերի միակցման հարցը: Պաշտոնական թբիլիսին ծրագրում է, որ վերոնշյալ ծրագրի հաջող իրագործումից հետո կանցնի *«ՆԱՏՕ-ի հետ միավորման պլանի»* նախապատրաստական աշխատանքներին:

ՆԱՏՕ անդամակցության հարցում, սակայն, Վրաստանի գործող վարչակարգը դեռեւս չիրագործված լուրջ խնդիրներ ունի: Հյուսիսատլանտյան դաշինքին անդամակցելու գլխավոր նախապայմաններից մեկն էլ ազգային անվտանգության համապատասխան հայեցակարգի ստեղծումն է, որը մինչ օրս չի մշակվել հարավկովկասյան այս հանրապետությունում: Այս խնդրում պաշտոնական թբիլիսին աջակցում է Միացյալ Նահանգները: Դեռեւս 2003թ. հունվարի 29-30-ին Վրաստանի նախորդ կառավարությունը թբիլիսիում կազմակերպել էր *«Վրաստանի ազգային անվտանգության հայեցակարգ»* թեմային նվիրված համագումար, որտեղ քննարկման էր դրվել նոր հայեցակարգի նախագիծը: Համագումարին մասնակցում էին նաեւ փորձագետներ մերձբալթյան երկրներից, ԱՄՆ-ից, Մեծ Բրիտանիայից ու Գերմանիայից:

### **Վրաց-ամերիկյան ռազմական համագործակցությունը**

ԱՄՆ-ը հարավկովկասյան իր քաղաքականությունում մեծ կարևորություն է տալիս Վրաստանին: Վրաց-ամերիկյան համագործակցությունն ամրապնդվում է ինչպես քաղաքական, տնտեսական, այնպես էլ ռազմական ոլորտներում: Դեռևս 2004թ. հուլիսի 14-ին կողմերը ստորագրեցին մի պայմանագիր, ըստ որի Վրաստանին էր հատկացվելու \$12 մլն ռազմական օգնություն՝ բանակի զինման, վրացի զինծառայողների ծառայողական պայմանների բարելավման նպատակներով:

Ս.թ. սեպտեմբերի սկզբներին ավարտվեց Վրաստանի ՊՆ ենթակազմում գտնվող խաղաղապահ «Շավնաբադ» թվով 4-րդ գումարտակի վերապատրաստումը: Ամերիկացի հրահանգիչները նախորդ երեք գումարտակների վերապատրաստմանը հատկացրել էին \$64 մլն: Վրաստանի ՁՈւ 11-րդ մոտոհրաձգային բրիգադի՝ 470 վրացի զինծառայողներից բաղկացած 111-րդ գումարտակը միամսյա վերապատրաստման կուրսը եւս անցել է ամերիկյան հրահանգիչների ծրագրերով ու անմիջական ղեկավարությամբ: Գումարտակի զինծառայողները մեկնելու են Իրաք եւ Կոսովո՝ խաղաղության աջակցման առաքելությամբ: Մասնավորապես՝ նախատեսվում է ավելացնել Իրաքում գտնվող վրացի խաղաղապահ ուժերի կազմը մինչեւ 850-ի: Բացի այդ, զինծառայողների մի մասն էլ ուղարկվելու է Աֆղանստան, որոնց շարքերը համալրելու է Սաչխերիի 16-րդ լեռնահրաձգային գումարտակի հետեւակի ուժեղացված դասակը: «Աջակցություն ահաբեկչության դեմ պայքարում» ծրագրի շրջանակներում 2005 ֆինանսական տարում Վաշինգտոնը Վրաստանին է տրամադրելու ավելի քան \$15 մլն: Նախատեսվում է Վրաստանում վերապատրաստել հավելյալ 4.000 զինծառայողներ, որոնց ուսուցման ծրագիրը սկսվելու է ս.թ. վերջին: ԱՄՆ պետդեպարտամենտի մամուլի ծառայության հաղորդած տեղեկատվության համաձայն, վերջին երեք տարիների ընթացքում ահաբեկչության սպառնալիքի դեմ պայքարի աջակցության ծրագրի շրջանակներում ԱՄՆ-ը Վրաստանին է տրամադրել ընդհանուր առմամբ \$47 մլն:

Հոկտեմբերի կեսերին ԱՄՆ Ներկայացուցիչների պալատն ու Սենատը վավերացրին 2005 ֆինանսական տարում երկրի պաշտպանական բյուջեն \$477 մլրդ-ի սահմաններում: Այն նախատեսում է Կովկասի ու Կենտրոնական Ասիայի երկրներում զանգվածային ոչնչացման զենքի չտարածման ամերիկյան նոր «Մետաքսե ճանապարհ» նախաձեռնության շրջանակներում Վրաստանին հատկացնել \$10 մլն:

### **Վրաց-թուրքական ռազմական կապերը**

Հարավային Կովկասում քաղաքական, տնտեսական ազդեցություն ձեռք բերելու թուրքիայի նկրտումները նոր երեւոյթ չեն: Վերջինս ձգտում է ամրապնդել տարածաշրջանում նաեւ որպէս ՆԱՏՕ ազդեցիկ անդամ երկրներից մեկը: Թուրքիայի հետ երկկողմ հարաբերությունների սերտացմանը եւ հատկապէս ռազմական բնագավառում համագործակցությանը ձգտում է նաեւ Վրաստանը: Դեռեւս 1999թ. նոյեմբերի 17-ին ստորագրվեց թուրք-վրացական մի պայմանագիր, որը նախատեսում էր Վրաստանի ՁՈւ արդիականացմանը տրամադրել ֆինանսական հատկացումներ: 1999թ. այդ ծրագրի շրջանակներում թուրքիան Վրաստանին տրամադրեց ընդհանուր առմամբ \$2.1 մլն (այդ թվում եւ՝ Մառնեուլի օդանավակայանի, ՊՆ Կոչորի ուսումնական կենտրոնի արդիականացման ծրագրերի համար): 2000թ. թուրքիան Վրաստանին է տրամադրել \$4 մլն ռազմական օգնություն, 2001թ. այն կազմել է ընդամենը \$2.5 մլն: Վիճակագրությունը ցույց է տալիս, որ թեւեւ թուրք-վրացական ռազմական համագործակցությունը շարունակում է մնալ անուր հիմքերի վրա, այդուհանդերձ, թուրքիայի կողմից Վրաստանին տրամադրվող ռազմական աջակցության ծավալը գնալով նվազում է:

2005թ. թուրքիան նախատեսում է Վրաստանին հատկացնել \$2 մլն ռազմական աջակցություն (1998թ. այն կազմել է \$ 5 մլն): Այն ուղղվելու է Վրաստանի Ազգային ռազմական ակադեմիային, Մառնեուլի օդանավակայանին (Վրաստանի ղեկավարությունը նախատեսում է օդանավակայանը շահագործել որպէս երկրի ռազմաօդային ուժերի տեղակայման հիմնակետ), Գլխավոր շտաբի ստորաբաժանումներից մեկին, երկրի ռազմածովային ուժերին: 1998-2004թթ. թուրքիան հարավկովկասյան այս հանրապետությանն է տրամադրել ընդհանուր առմամբ \$37.4 մլն ռազմական օգնություն:

### **Մեծ Բրիտանիայի հետ ռազմական կապերը**

Հարավային Կովկասում ընթացող զարգացումներին ուշադրությամբ է հետեւում նաեւ Մեծ Բրիտանիան: Վերջին ամիսներին բավականին ակտիվացել են վրաց-բրիտանական հարաբերությունները հատկապէս ռազմական բնագավառում: Ներկայումս Մեծ Բրիտանիան, Միացյալ Նահանգներից ու թուրքիայից հետո, Վրաստանի ՁՈւ-ին աջակցության տրամադրման տեսանկյունից երրորդ խոշոր երկիրն է:

Լոնդոնը զգալի նշանակություն է տալիս Վրաստանին: Վերջինս

տարածաշրջանի տրանսպորտային այն կարելու հանգույցն է, որը կարող է մեծ տնտեսական հնարավորություններ ընծեռել Արեւմուտքին: Ձգալի կարելու շրջանում է տրվում հատկապես Բաքու – Թբիլիսի – Ջեյհան նավթամուղի անվտանգության ապահովման խնդիրներին, որոնց նկատմամբ առանձնահատուկ շահագրգռվածություն են ցուցաբերում թե՛ ԱՄՆ-ը եւ թե՛ Մեծ Բրիտանիան: Բրիտանացի սպաներն ու ռազմական հրահանգիչները սկսել են պաշտոնապես աշխատել Վրաստանում դեռեւս հունիսի վերջից, երբ Վրաստան էր ժամանել Մեծ Բրիտանիայի ՁՈւ հետեւակային երկու վաշտ, Թբիլիսիից ոչ հեռու տեղակայված Վազիանիի ռազմակայանի՝ բրիտանական կողմի վարձակալած հրաձգարանում ռազմադաշտային զորավարություններ կազմակերպելու նպատակով: Նշենք նաեւ, որ Վրաստանի ՊՆ համակարգում մշտական կարգավիճակով աշխատում է անգլիացի գեներալ Չարի Ջոնսոնը: Վերջինս զբաղվում է հարավկովկասյան հանրապետությանը տրամադրվող ռազմական աջակցության կողողինացման գործունեությամբ:

Անգլո-սաքսոնական տարրի ակտիվացումը Չարավային Կովկասում չի կարող չհանգանգստացնել Ռուսաստանին: Վերլուծաբաններից շատերն են հանգել այն տեսակետին, թե տարածաշրջանում բրիտանա-ամերիկյան դիրքերի ամրապնդումը կարող է նպաստել Կովկասից Ռուսաստանի դուրսմղմանը, իսկ Մեծ Բրիտանիայի նկատմամբ ռուսական ճնշման լծակը, վերլուծաբանների կարծիքով, կապված է ՌԴ-ում աշխատող բրիտանական ընկերությունների հետ՝ առաջին հերթին հարցակայանի տակ դնելով British Petroleum-ի նավթագազային նախագծերի իրագործումը:

### **Ռազմական համագործակցություն այլ երկրների հետ**

Պաշտոնական Վրաստանը ՁՈւ արդիականացման ու համալրման խնդիրները լուծում է գլխավորապես ի հաշիվ ՆԱՏՕ անդամ երկրների կողմից հատկացվող ռազմական տեխնիկայի ու սպառազինության: 1990-ականների երկրորդ կեսին Վրաստանը ՆԱՏՕ անդամ պետություններից եւ Ուկրաինայից ձեռք բերեց մի քանի ռազմանավեր:

Մասնավորապես ակտիվացել են վրաց-բուլղարական հարաբերությունները: Սպառազինության առելտրով զբաղվող միջազգային ընկերություններից մեկի ղեկավարի հավաստմամբ, դեռեւս հուլիսի սկզբներին Փոթի են բերվել Բուլղարիայից գնված 122 մմ տրամաչափի հաուբիցի եւ S-72 տեսակի տանկերի համար նախատեսված 125 մմ-անոց արկեր, ձեռքի հակատանկային նռնակամետեր եւ այլ զինամթերքներ՝ \$5 մլն ընդհանուր արժողությամբ: Թբիլիսին նախատեսում է բանակցել բուլղարա-



կան ընկերությունների հետ հրաձգային եւ հրետանային զենք ու զինանթերք գնելու հարցի շուրջ: Գործարքը, ըստ որոշ աղբյուրների, կազմում է \$6 մլն:

Վրաստանի հետ, մասնավորապես, ռազմածովային պաշտպանության բնագավառում, համագործակցում է նաեւ Հունաստանը: Դեռեւս 2002թ. հուլիսին կողմերը ստորագրել էին «Վրաստանի ռազմածովային ուժերի վերակազմակերպման շուրջ» արձանագրություն: Համաձայնագիրը նախատեսում էր Հունաստանում վերանորոգել Վրաստանի ռազմածովային ուժերի (ՌԾՈւ) երկու՝ «Իվերիա» եւ «Մեստիա» պարեկային ռազմանավերը, ինչպես նաեւ այս երկիր վերապատրաստման ուղարկել 20 վրացի տեխնիկական գծով մասնագետներ ու ՌԾՈւ զինծառայողներ: Հունաստանի ղեկավարությունը նաեւ պատրաստակամություն էր հայտնել՝ վերականգնել Փոթիի ծովային պաշտպանության ռազմակայանն ու ռազմանավամատույցների ենթակառուցվածքը: Իսկ 2002թ. սեպտեմբերին ծրագրվում էր Վրաստանի ՌԾՈւ-ում հիմնել հույն ռազմական խորհրդատուի ինստիտուտ, որը զբաղվելու է երկրի ծովային պաշտպանության ուժերի վերակազմակերպման հարցերով: 2004թ. սկզբին Հունաստանի կառավարությունը՝ որպես դրամաշնորհ, նախատեսում էր Վրաստանի ՌԾՈւ-ին հատկացնել Ֆրանսիայում կառուցված 300 տոննա ջրածավալի հրետանային ռազմանավակ:

Շարունակվում է ռազմական համագործակցությունը Իսրայելի հետ: Ս.թ. հուլիսի վերջին Իսրայել կատարած այցելությունից հետո Վրաստանի նախագահ Մ. Սահակաշվիլին հայտարարեց երկրի հատուկ նշանակության զորքերի համար «Տավոր» տեսակի շուրջ 1.000 ինքնաձիգ գնելու մտադրության մասին: Վրաստանը երկրորդ երկիրն է դառնում Հնդկաստանից հետո, որն Իսրայելից գնում է այդ տեսակի ինքնաձիգներ:

Վրաստանի հետ ռազմական հարաբերությունների զարգացման հարցում մեծ շահագրգռություն է ցուցաբերում Ֆրանսիան: Դեռեւս ս.թ. սեպտեմբերի 28-ին Վրաստանի զինված ուժերի գլխավոր շտաբի ղեկավարի տեղակալ Լեւան Նիկոլաիշվիլին եւ Վրաստանում Ֆրանսիայի դեսպան Ֆիլիպ Լոֆորը ստորագրեցին 2005թ. երկու երկրների միջեւ ռազմական համագործակցության պայմանագիր, որը կենտրոնանում էր մասնավորապես լեռնառազմական, բժշկական ու կրթական հարցերի վրա: Ըստ համաձայնագրի, 2005թ. վրացի զինծառայողների վերապատրաստման առաքելությամբ Վրաստան կայցելեն ֆրանսիացի ռազմական հրահանգիչներ, իսկ վրացի զինվորականները փորձ ձեռք բերելու նպատակով կմեկնեն Ֆրանսիա: Ավելին, արդեն հոկտեմբերի 11-ին Բաթունի նավահանգիստ էր ժամանել Ֆրանսիայի ռազմածովային

ուժերի Enseige de Vaisseau Jacoubet ռազմանավը, որը հոկտեմբերի 14-ին մասնակցեց վրացի ծովայինների հետ համատեղ կազմակերպված զորավարժություններին:

Ձարգանում են նաեւ վրաց-գերմանական ռազմական կապերը: Դեռեւս 2001թ. կողմերը ստորագրեցին համաձայնագիր, ըստ որի Գերմանիայի Դաշնային Հանրապետության կառավարությունը Վրաստանին հատկացրեց դրամաշնորհ՝ մասնավորապես տրամադրելով ռազմատեխնիկա, այդ թվում՝ 50 ռազմաբեռնատարներ, զինծառայողական համազգեստներ: Նշենք, որ Աֆղանստանում վրացի խաղաղապահներն իրենց պարտականություններն իրականացնում են գերմանական խաղաղապահ ստորաբաժանումների կազմում:

## **ԱՄՆ ՆԱԽԱԳԱՅԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՋ Գազիկ Տերտերյան**

Ինչպես եւ կարծում էր վերլուծաբանների գերակշռող մասը, ԱՄՆ նախագահական ընտրություններում հաղթեց Ջորջ Բուշը: Տեղի ունեցած ընտրությունները թույլ են տալիս կատարել հետեւյալ եզրակացությունները.

❖ Բուշն ուներ բազում խոցելի դիրքեր. Իրաքի չլուծված հիմնախնդիրը՝ արտաքին քաղաքականության ոլորտում, բյուջեի դեֆիցիտի ավելացումը, աշխատատեղերի կրճատումը, նավթի գների բարձրացումը, բորսային ինդեքսների անկումը եւ, վերջապես, անձի ազատությունների սահմանափակումը՝ ներքին քաղաքականությունում: Ուժեղ մրցակցի պարագայում թերացումների այս համախումբը միանգամայն բավարար կլիներ, որպեսզի գործող նախագահը չվերընտրվեր: Ճիշտ է, այս թերացումների կողքին պետք է հաշվի առնել ԱՄՆ հանրապետականների ընտրական ճիշտ մարտավարությունը՝ ընդդեմ միասեռ ամուսնությունների:

❖ Ընդդեմ Բուշի ընտրված էր ամերիկյան ավանդական չափանիշներով ոչ ուժեղ հավակնորդ: Քերիի թուլությունը պայմանավորված էր հետեւյալ հանգամանքներով. Քերին կաթոլիկ է (ԱՄՆ նախագահների պատմությունում միայն Քենեդին էր, որ չի եղել բողոքական եկեղեցու հետեւորդ), ունի ֆրանսիական-իրեական արմատներ (ԱՄՆ-ում ֆրանսիացիներին չեն սիրում մոտավորապես այն չափով, որքանով վերջիններս՝ ամերիկացիներին, այսինքն՝ բնակչության մոտ 40-50%-ը): Եվ վերջապես՝ Քերին ունի ոչ այնքան համակրելի արտաքին, ինչը խիստ կարեւոր է ամերիկուհիների համար (վերջին հանգամանքը, օրինակ, կարեւոր դեր խաղաց Քլինթոնի ընտրության դեպքում):

❖ Չնայած վերոնշյալ հանգամանքներին, Քերին հավաքեց մոտ 48%, ինչը վկայում է, որ Բուշի դիրքերն օբյեկտիվորեն խոցելի էին, եւ ճիշտ ընտրված հավակնորդի պարագայում նրա պարտությունը անխուսափելի կլիներ:

❖ Այսպիսով՝ կարելի է եզրակացնել, որ թերեւս ճիշտ է այն վարկածը, թե Քերին առաջադրել էին նույն ուժերը, որոնք շահագրգռված էին Բուշի վերընտրությամբ: Այսպիսով՝ Բուշին «ընտրել» են ԱՄՆ քաղաքականու-

թյունն իրականում որոշող ուժերը, այսպես կոչված, «խորքային պետության» *(ամերիկյան այս հասկացությունը բնութագրում է ստվերում գտնվող այն գաղափարախոսական-ֆինանսական մեծ ազդեցություն ունեցող ուժերին, որոնք իրականում որոշում են ԱՄՆ ռազմավարությունը)* ներկայացուցիչները:

❖ Ելնելով վերոհիշյալից՝ պետք է ենթադրել, որ ԱՄՆ մոտ ապագայի ռազմավարությունը կարտահայտվի հետեւյալ թեզերով. ներքին քաղաքականությունում՝ հզոր հատուկ կառույցներով *(վերընտրվելուց անմիջապես հետո Բուշը վերստին հայտարարել է հետախուզական համակարգի հիմնարար վերափոխման մասին)* «մոբիլիզացիոն» պետության վերջնական ձեւավորում, արտաքին քաղաքականությունում՝ զարգացման էքստենսիվ ճանապարհ: Համաձայն այդ մոտեցման, ԱՄՆ-ը չի կարող առաջընթաց ապրել եւ անգամ գոյություն ունենալ առանց նոր շուկաների եւ քաղաքական ազդեցության ոլորտների ձեռքբերման:

Այս ամենի համատեքստում թերեւս տեղին է անդրադառնալ ԱՄՆ հայկական համայնքի դիրքորոշմանը: Անշուշտ, ամերիկահայերի կողմնորոշումը դեպի այս կամ այն նախագահի թեկնածուն՝ համայնքի համար ճակատագրական նշանակություն չունի: Սակայն հաշվի առնելով «հայկական հարցերի» կարեւորությունը եւ կախվածությունը ԱՄՆ դիրքորոշումից, թերեւս գերադասելի կլիներ ամերիկահայության ավելի ճկուն պահվածքը (օրինակ, համայնքի առանձին թեւերի «տարակարծությունը»):

\* \* \*

Գլոբալ քաղաքականության համատեքստում Բուշի նախագահական երկրորդ ժամկետում կարելի է սպասել հետեւյալ զարգացումները.

❖ ԱՄՆ – Եվրոպա հարաբերություններում ԱՄՆ-ը կպահպանի իր կոշտ դիրքորոշումը՝ միաժամանակ փորձելով մեծացնել ազդեցությունը Եվրոպայում: Այդ առումով ԱՄՆ-ը ջանք չի խնայելու Գերմանիայում իշխանության բերել քրիստոնեա-դեմոկրատներին, որպես ավանդաբար ամերիկյան կողմնորոշում ունեցող կուսակցություն *(ԲՂ-ն ստեղծել են ամերիկացիները անմիջապես Երկրորդ համաշխարհայինից հետո)*: Նման քաղաքականության հիմնական նպատակն է՝ թույլ չտալ Բեռլին – Մոսկվա, իսկ ներկայումս՝ նաեւ Բեռլին – Փարիզ – Մոսկվա առանցքների կայացումը, ինչն ավանդաբար անգլոսաքսերը հաջողությամբ իրականացնում են: Իր հերթին Բուշի վերընտրվելը ստիպելու է Եվրոպացիներին հարմարվել ստեղծված իրավիճակի հետ եւ ավելի փափուկ դիմադրել ԱՄՆ հարձակողական ռազմավարությանը:

❖ ԱՄՆ մերձավորարեւելյան քաղաքականությունը շարունակելու է կրել ուժային բնույթ: Այն նպաստելու է Իսրայելի ներկա քաղաքականությանը՝ ուղղված հրեաների եւ պաղեստինցիների տարանջատմանը (այս կապակցությամբ պետք է եւս մեկ անգամ կարեւորել ամերիկյան Կոնգրեսի վերջերս կայացրած այն որոշումը, համաձայն որի ԱՄՆ-ը իր քաղաքականությունն այլ երկրների հետ այսուհետ կառուցելու է՝ ելնելով վերջինիս՝ հրեաների հանդեպ ունեցած դիրքորոշումից): Իրաքում ունեցած առաջին իսկ հաջողություններից հետո փորձ է կատարվելու ԱՄՆ-ից էլ ավելի մեծ կախման մեջ դնել Սաուդյան Արաբիան եւ Եգիպտոսը:

❖ Մերձավոր Արեւելքում տարվող ռազմավարության տրամաբանությունը թելադրելու է ԱՄՆ-ին Իրանի դեմ վարել ավելի վճռական քաղաքականություն: Դա իր հերթին նշանակում է, որ Ադրբեջանում, ինչպես նաեւ մեր կողմից ազատագրված տարածքներում ամերիկյան զինուժի տեղակայման հավանականությունը մեծանում է: Այդ համատեքստում պետք է սպասել ճնշումներ Ղարաբաղյան հիմնախնդրի ուղղությամբ, իսկ Իրաք հայկական դասակ ուղարկելու հարցը դառնալու է հրատապ արդեն մոտ ժամանակներս:

Միեւնույն ժամանակ ամերիկյան ռազմավարության մասին շատ բան կհուշելի այն, թե ովքեր են տեղ գրավելու Բուշի նոր վարչակազմում: Առաջմ մամուլում քննարկվում են հաճախ հակասական տարբերակներ՝ կապված կառավարությունում նեոկոնսերվատորների մասնակցության հետ: Եթե վերջիններիս դերակատարումը մեծանա (օրինակ, գրում են, որ Քոլին Փաուելին կարող են փոխարինել Փոլ Վուլֆովիցը կամ Քոնդոլիզա Ռայսը, իսկ վերջինս հավակնում է նաեւ Պենտագոնի ղեկավարի պաշտոնին), ապա ԱՄՆ կողմից կարելի է սպասել առավել կոշտ լուծումներ, այդ թվում՝ կապված մեր տարածաշրջանի հետ:

Բուշի վերընտրվելը միզուցե կարելի էր ՀՀ-ի համար դրական երեւույթ համարել, քանի որ հանրապետականներն ընդհանուր առմամբ լավ չեն տրամադրված Թուրքիայի հանդեպ: Սակայն հիմնական բարդությունն այն է, որ, ի տարբերություն նախկինի, այսօր Իրանի շրջափակման խնդիրը (որին ձգտում են ԱՄՆ-ը եւ Իսրայելը) անմիջականորեն կապվել է Ղարաբաղյան հիմնախնդրի հետ:

## **ՉԻՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՆ**

### **Գազիկ Տեր-Չարությունյան**

Ժամանակակից քաղաքականությունում չինական գործոնն աստիճանաբար վերածվում է թիվ մեկ խնդրի: Այդ երկրի տնտեսական աճի շարունակական եւ աննախադեպ տեմպերը (տարեկան 8-10%) տազնապեցնում են ավանդական առաջավոր տերություններին: Ակնհայտ է, որ Չինաստանը վերածվում է ուժի նոր կենտրոնի, որն ի վիճակի է փոխելու ներկայիս գլոբալ ռազմաքաղաքական հաշվեկշիռը: Այսօր Չինաստանն ակտիվ քաղաքականություն է վարում նաեւ Կովկասյան տարածաշրջանում: Եթե նախկինում այդ տերության գործունեությունը հիմնականում տնտեսական բնույթ էր կրում, ապա ներկայումս սկսել են գործել նաեւ քաղաքական երանգ կրող մարդասիրական ծրագրեր: Այդպիսիք են, օրինակ, օգնությունը Բեսլանի ահաբեկչությունից տուժածներին եւ մասնակցությունը Չեչնիայի կրթական համակարգի վերականգնման աշխատանքներում:

ՉԺՅ-ՅՅ համագործակցության հիմքերը դրվել են դեռեւս 1990-ականների կեսերին, այսօր այն ունի զարգանալու ակնհայտ միտումներ: Հաշվի առնելով չինական քաղաքականության առանձնահատկությունները՝ առայժմ դժվար է հստակ կանխորոշել Չինաստանի աշխարհաքաղաքական ձգտումները մեր տարածաշրջանում: Սակայն բոլոր պարագաներում ակնհայտ է, որ ոչ հեռու ապագայում Չինաստանը տարածաշրջանում ունեցած իր ազդեցության չափով կարող է համեմատվել Ռուսաստանի, ԱՄՆ-ի, ԵՄ-ի եւ Իրանի հետ:

### ***Քաղաքական ռազմավարությունը***

Մոտ քառասուն տարի առաջ Մաո Ցզեդունի հարուցած կուլտուրական հեղափոխությունը կարծես թե հիմնովին քայքայել էր Չինաստանը: Սակայն ինքը՝ Մաոն, համարում էր, որ իր գործողություններով հետեւում է Չինաստանը միավորող կայսր Ցզին Շիհուանի քաղաքականությանը: Մինչդեռ կուլտուրական հեղափոխության նկատմամբ առայսօր վերլուծաբանների տեսակետները բեւեռացված են: Ոմանք համարում են, որ այդպիսով Մաոն ձեւավորեց նոր հոգեկերտվածք ունեցող եւ նախկին կիսագաղութային ժողովրդի բարդույթներից ձերբազատված քաղաքական ընտրանի, որն ի վիճակի եղավ իրագործել անկախ գործողություններ քաղաքականության եւ տնտեսության ոլորտում: Ըստ այդմ՝ այս

տեսակետի պաշտպանները գտնում են, որ Չինաստանն իր ներկայիս հաջողություններով պարտավոր է հենց Մաոյի գաղափարներին:

Բոլոր պարագաներում կուլտուրական հեղափոխությունը մեծագույն նյութական վնասներ հասցրեց Չինաստանին: Համարվում է, որ Դեն Սյաոպինի կազմակերպչական հանճարն էր, որ փրկեց երկիրը կազմալուծումից: Հատկանշական է, որ, ի տարբերություն ռուսաստանյան կոմունիստների, որոնք Ստալինի մահից հետո փորձեցին մոռացության տալ վերջինիս անունը, Դեն Սյաոպինը «փափուկ տարբերակով» պահպանեց Մաոյի պաշտամունքը՝ թույլ չտալով, որպեսզի մարդկանց գիտակցությունում առաջանա պատմական-ժամանակային խզում: Ընդհանրապես պետք է նշել, որ չին կոմունիստները, ի տարբերություն ռուսաստանյան գործընկերների, խիստ ուշադիր են սեփական պատմական անցյալի նկատմամբ եւ չեն կտրում նոր Չինաստանը նախկին կայսերական Չինաստանի պատմությունից:

Որոշ փորձագետներ, հենվելով 2002թ. կայացած չինական կոմկուսի 16-րդ համագումարի փաստաթղթերի վրա, գտնում են, որ չինացիներն իրենց պատմության նորագույն շրջանը եւ մոտ ապագան դասակարգում են հետեւյալ կերպ. Մաո Ցզեդունի փուլ (1959-1975)–«Ազատագրում եւ վերածնունդ», Դեն Սյաոպինի փուլ (1979-1989)–«Արդիականացում եւ աճ», Ցզյան Ցզենինի փուլ (1989-2009)–«Կայունացում եւ հավասարեցում» (համարվում է, որ ներկայիս նախագահ Յու Ցզինտանն շարունակում է Ցզյան Ցզենինի քաղաքական կուրսը), ղեկավարների 4-րդ սերունդ (2009-2019)–«Վեհություն եւ արժանապատվություն»: Ենթադրվում է, որ այս վերջին փուլում Չինաստանը զբաղեցնելու է աշխարհում իրեն վայել հզորագույն երկրի դիրքը:

Չինաստանի ժամանակակից արտաքին քաղաքականությունը ենթարկվում է, այսպես կոչված, «երեք հյուսիս, չորս ծով» դոկտրինային, որն ընդունվել է Չինական կոմկուսի Կենտրոնական կոմիտեի Ռազմական խորհրդի կողմից 1993 թվականին: Երեք հյուսիսի տակ հասկացվում են չորս օվկիանոսների (ծովերի) սահմաններում գտնվող Հյուսիսատլանտյան միությունը, Ռուսաստանը եւ Միացյալ Նահանգները: Համաձայն այդ դոկտրինի՝ այդ երեք ուժերին էլ Չինաստանը հաղթելու է 2019թ. մատույցներում:

### **Գիտատեխնիկական ծրագրեր եւ տնտեսություն**

Դեն Սյաոպինի բարեփոխումներից ամենակարեւորն այն էր, որ 1980-ականների սկզբին նա հիմք դրեց 10 խոշոր գիտատեխնիկական նպատակային ծրագրերի: Այդ ժամանակահատվածում ընդունվեցին հատուկ օրենքներ գիտական առաջընթացն ապահովելու նպատակով: Բնորոշ է,

որ այդ ծրագրերից մեկի խնդիրը 21-րդ դարում ղեկավար օղակների համար նոր ընտրանու ձեւավորումն էր: Վերջին 20 տարում գիտության ֆինանսավորումը աճել է ավելի քան 8 անգամ: Ներկայումս Չինաստանում գործում են մոտ 23 000 ինստիտուտ, աշխատում են 1,5 մլն գիտաշխատող եւ ինժեներ, ինչը բացարձակ թվերով առաջին, իսկ համեմատականով՝ 4-րդ ցուցանիշն է աշխարհում:

1978թ. ՉԺՀ ՀՆԱ-ն կազմում էր ընդամենը \$43 մլրդ: Դրան հետեւում է տնտեսության բուռն աճ. 1990-ին ՀՆԱ-ն կազմում է \$211 մլրդ, 1995-ին՝ \$463 մլրդ, 2002թ.՝ \$1,2 տրիլիոն, իսկ 2004թ.՝ \$1.4տրիլիոն: Համաձայն Տնտեսական համագործակցության եւ զարգացման կազմակերպության այս տարվա վիճակագրական տվյալների, 2003թ. Չինաստանը արտերկրից ստացած ուղղակի ներդրումների ծավալով՝ \$53 մլրդ, գերազանցեց ԱՄՆ համապատասխան ցուցանիշը՝ \$40 մլրդ:

Հատկանշական է, որ ամենախոշոր ներդրողը Չինաստանում ԱՄՆ-ն է, իսկ երրորդ տեղը, որքան էլ տարօրինակ թվա, զբաղեցնում է Թայվանը: Միացյալ Նահանգները նաեւ ՉԺՀ ամենախոշոր առեւտրական գործընկերն է՝ Չինաստանի արտահանման 21%-ը (մոտ \$52 մլրդ) բաժին է ընկնում ԱՄՆ-ին: Բնորոշ է, որ ԱՄՆ կողմից գրավված Իրաք հիմնական ներմուծողը նույնպես Չինաստանն է: Ընդհանուր առմամբ այսօր ՉԺՀ-ն գրավում է ճապոնիայի հետ 3-4-րդ տեղը ընդհանուր ապրանքաշրջանառության ցուցանիշներով (ԱՄՆ՝ \$2,3 տրիլիոն, Գերմանիա՝ \$1,35 տրիլիոն, ճապոնիա եւ Չինաստան՝ մոտ \$0,85 տրիլիոն): Չինաստանը կարելի է բարձր տեխնոլոգիաների նշանակությունը եւ ամեն տարի ներկրում է մոտ \$11-12 մլրդ-ի՝ այդ ոլորտին պատկանող համակարգեր:

Հարկ է նշել, որ չինական արտադրանքի արտահանմանը նպաստում է ներկայիս յուանի արհեստականորեն իջեցված եւ երկար ժամանակ պահպանվող կուրսը (1\$=8.3 յուանի): Ըստ արեւմտյան փորձագետների, իրականում 1\$=5,0 յուանի: Չնայած բազմաբնույթ ճնշումներին եւ անգամ պաշտոնական խոստումներին, Չինաստանի իշխանությունները պահպանում են յուանի ներկայիս կուրսը: Այս համատեքստում տեղին է նաեւ նշել տեղեկատվական դաշտում տեղ գտած այն հաղորդումները, թե Հարավարեւելյան տարածաշրջանում յուանը կարող է ընդունվել որպես միասնական տարադրամ:

### **ԱՄՆ – Չինաստան**

Համաձայն ամերիկյան վերլուծաբանների, ԱՄՆ հիմնական մրցակիցը 21-րդ դարում հանդիսանում է Չինաստանը: ԱՄՆ-ի համար ՉԺՀ-ն այսօր վտանգավոր է ոչ այնքան իր տնտեսական պարամետրերով, որքան ռազմաքաղաքական եւ գաղափարական հատկանիշներով ու զարգաց-



ման հեռանկարներով: Առանձին անհանգստություն է պատճառում ՉԺՀ ռազմական ներուժը: Ըստ Պենտագոնի տվյալների, 2002թ. Չինաստանի բանակում ծառայում են մոտ 2.5 մլն, մարդ, իսկ ռազմական բյուջեն կազմում էր \$65 մլրդ, եւ այդ թիվը ամեն տարի 10-15% աճելու միտում ունի: ՉԺՀ-ն այսօր ունի մոտ 400 բալիստիկ հրթիռ, դրանց թիվը ամեն տարի ավելանում է 50-ով: Եթե նախկինում Չինաստանի սպառազինության հիմնական մատակարարը Ռուսաստանն էր (վերջինս ՉԺՀ-ին վաճառում է տարեկան մոտ \$1 մլրդ-ի զենք), ապա այսօր ռազմական շատ ոլորտներում չինացիները հենվում են սեփական գիտատեխնիկական մշակումների վրա եւ արդեն հաջողությամբ կառուցում են հրթիռներ, ատոմային սուզանավեր:

Սակայն չինական առանձնահատկությունը առավելապես պայմանավորված է այն հանգամանքով, որ, ի տարբերություն Ռուսաստանի, չինացիները տարբեր առիթներով ցուցադրում են իրենց կամքն ու վճռակալությունը՝ ուժ կիրառել ԱՄՆ-ի դեմ: Դա առանձնապես ցայտուն է երեւում Թայվանի մոտ ծովային զորավարժությունների ժամանակ:

Հատուկ պետք է ընդգծել ՉԺՀ հաջողությունները տեղեկատվական ոլորտում: Իրենց քաղաքականությունն այդ ոլորտում չինացիները կառուցում են մ.թ.ա. 5-րդ դարի զորավար եւ փիլիսոփա, ռազմավարության եւ հետախուզության տեսական հիմունքների ստեղծող Սուն Ցզիի դրույթների համաձայն: Նկատենք, որ Սուն Ցզիի մոտեցումները արդեն 60 տարուց ավելի հաջողությամբ օգտագործում են նաեւ ամերիկյան հատուկ կառույցները: Համարվում է, որ այսօր ՉԺՀ-ն միակ երկիրն է, որը կարող է մրցակցել ԱՄՆ-ի հետ տեղեկատվական-հոգեբանական պատերազմների վարման ոլորտում:

Ի լրումն աճող ռազմական ներուժի՝ ՉԺՀ-ն ԱՄՆ-ի համար վտանգ է հանդիսանում քաղաքական տեսակետից: Հարավարեւելյան Ասիայում ընթանում են խնդրումներ «դեղին ռասայի» ընդհանրականության հենքի վրա: Արդեն 2000-ի սկզբներին ակտիվորեն քննարկվում էր «Ասիական ՆԱՏՕ»-ի տարբերակը, որի հնարավոր մասնակիցներն են համարվում ՉԺՀ-ն, Ճապոնիան, Հյուսիսային եւ Հարավային Կորեաները: Համաձայն տարածաշրջանային քաղաքական ավանդույթների եւ այսօրվա իրողության, «ավագ եղբայրը» այդ համակարգում հանդիսանում է ՉԺՀ-ն:

Նման միտումները հանդիսանում են ԱՄՆ գլխավոր հիմնախնդիրը, քանի որ այդպիսով կստեղծվի ԵՄ տիպի մի նոր «կորպորատիվ կայսրություն»: Այն կարող է կազմալուծել մեծ ջանքերով ստեղծված ներկայիս տարածաշրջանային քաղաքական կառուցվածքը, որտեղ ԱՄՆ օգտին ձեւավորված ուժերի հաշվեկշիռը պահպանվում է ՉԺՀ – Թայվան, ՉԺՀ – Ճապոնիա, Ճապոնիա – Հարավ. Կորեա, Հյուսիս. Կորեա – Հարավ.

Կորեա հակասությունների շնորհիվ: Չինաստան – ճապոնիա առանցքային հարաբերությունները ինչ-որ չափով հիշեցնում են Ֆրանսիա – Գերմանիա հարաբերությունները: Եթե այդ երկրները վերածվեն ռազմավարական դաշնակիցների, ապա կսկսվեն մոտավորապես այն քաղաքական գործընթացները, որոնք բնորոշ են այսօր ԱՄՆ – ԵՄ բարդ հարաբերություններին, այստեղից բխող բոլոր հետեւություններով:

Մյուս հանգամանքը, որը խիստ կարեւոր է, գաղափարական գործոնն է: ՉԺՅ-ն մնում է սոցիալիստական երկիր եւ այդպիսով ցուցաբերում, որ եթե կոմունիստական գաղափարախոսությունը ներառում է ազգային ավանդական բաղադրիչը, ապա այն վերածվում է բավական կենսունակ համակարգի, որում առկա են ռազմատնտեսական «մոբիլիզացիոն» պետության, սոցիալական ուղղվածության եւ ազգային հասարակությանը բնորոշ ժողովրդավարության տարրերը: Ջարգացման նման մոդելը լուրջ մարտահրավեր է ունիվերսալ համարվող անգլո-սաքսոնյան ազատական մոդելին:

Հարկ է նաեւ նշել, որ ԱՄՆ ջանքերը ՉԺՅ ազգային փոքրամասնությունների անջատողական ձգտումների օգտագործման ուղղությամբ, առայժմ էական արդյունքների չեն հասնում: Մասնավորապես բուդդայականություն դավանող տիբեթցիների (մոտ 2,7 մլն) ազգային-անջատողական շարժում հրահրելը, ի վերջո, ապարդյուն անցավ: Վերջերս տիբեթցիների հոգեւոր առաջնորդը՝ դալայ լաման, որն համարվում էր ամերիկյան հատուկ ծառայությունների ազդեցության տակ գտնվող անձնավորություն, հանդես եկավ հայտարարությամբ, թե ինքը դեմ է ՉԺՅ-ից անջատվելու ծրագրերին: Ըստ նրա, Չինաստանի աննախադեպ տեխնոլոգիական եւ տնտեսական առաջընթացը ստեղծում է անհրաժեշտ պայմաններ տիբեթցիների զարգացման համար, եւ նրանք ուղղակի պետք է ներգրավվեն այդ դրական գործընթացներում:

ԱՄՆ-ը ակտիվ աշխատանք է վարում Սինցզյան – Ույղուրական ինքնավար շրջանում բնակվող (մոտ 7.5 մլն) մահմեդական ույղուր անջատողականների հետ: Նշենք, որ ժամանակին ույղուրական գործոնը Չինաստանի դեմ օգտագործել է ԽՍՀՄ-ը, եւ ներկայումս միջինասիական հանրապետություններում գործող ույղուրական ծայրահեղական կազմակերպություններից շատերը ժամանակին ստեղծվել են խորհրդային հատուկ ծառայությունների կողմից: Ներկայումս նրանց մի մասը սկսել է հարել տարածաշրջանում ԽՍՀՄ փլուզումից հետո հայտնված ուժի այլ կենտրոնների: Այսօր ույղուր անջատողականների գործունեության աշխարհագրությունն ընդլայնվել է, եւ այստեղ իրենց բաժինն ունեն ամերիկյան եւ թուրքական հատուկ կառույցները: Սակայն պետք է ամրագրել, որ Չինաստանին, ընդհանուր

առմամբ, հաջողվում է սանձել անջատողական ձգտումները երկրում:

Միեւնույն պարագայում ԱՄՆ-ը փորձում է օգտագործել Չինաստանը՝ որպես հակակշիռ Ռուսաստանի դեմ:

### **Ռուսաստան – Չինաստան**

Վերջին տարիներին Չինաստանի առաջնորդների (Ցզյան Ցզենինի եւ Հու Ցզինտաոի) եւ Պուտինի ավանդական դարձած հանդիպումները վկայում են այն մասին, որ միտում կա այդ երկրների միջեւ վերականգնել հարաբերությունների նախկին մակարդակը: Սակայն այսօր այդ հարաբերությունները ունեն այլ բովանդակություն: Նախկինում Ռուսաստանը համարվում էր Չինաստանի «ավագ եղբայրը», սակայն ուժերի հարաբերակցությունը փոխվել է՝ այսօր Չինաստանի տնտեսական ցուցանիշները մոտ 2-3 անգամ գերազանցում են ռուսաստանյան համապատասխան ցուցանիշները: Ելնելով իրենց ավանդական մոտեցումներից՝ չինացիները այսօր Ռուսաստանին անվանում են «ավագ քույր»: Դա ցածր է «ավագ եղբոր» կարգավիճակից, սակայն շեշտում է Ռուսաստանի կարելությունը Չինաստանի համար:

ԱՄՆ հարձակողական ռազմավարության համատեքստում ներկա աշխարհաքաղաքական իրողությունն այնպիսին է, որ Չինաստանը եւ Ռուսաստանը ուղղակի պարտադրված են համագործակցել միմյանց հետ: Ռազմաքաղաքական ոլորտում նրանց հարաբերությունները կառուցվում են Շանհայի համագործակցության կազմակերպության սահմաններում, ՄԱԿ-ում հաճախ համաձայնեցված դիրքորոշումներով եւ Ռուսաստանի կողմից Չինաստանին ռազմական տեխնիկայի (հիմնականում ուղղաթիռներ, «Ամֆիբիա» տիպի ինքնաթիռներ եւ կործանիչներ) սպասարկումով:

Տնտեսական ոլորտում Չինաստանի համար խիստ հրատապ է դարձել էներգակիրների ներմուծումը Ռուսաստանից: Հայտնի է, որ Չինաստանի տնտեսության համեմատաբար թույլ կետը համարվում է այն (չնայած վերջերս հայտարարվել է, թե հայտնաբերվել են 600 մլն տ նավթային պաշարներ ունեցող հանքավայրեր), որ այդ երկիրը չունի ածխաջրածնային վառելիքի սեփական խոշոր պաշարներ: Այսօր Չինաստանը, International Energy Agency-ի տվյալներով, օրական 2 մլն բարել նավթ է ներկրում: Համարվում է, որ արտադրության աճի ապահովման համար 2010թ. նավթի ներկրումը պետք է կրկնապատկվի: Հաշվարկել են, որ 2030թ. Չինաստանը սպառելու է օրական մինչեւ 10 մլն բարել նավթ, այսինքն՝ այնքան, որքան այսօր ներկրում է ԱՄՆ-ը: Սակայն արդեն այսօր Չինաստանը պատրաստ է ներկրել Ռուսաստանից մինչեւ 15 մլն տ նավթ: Թերեւս այդպիսով Չինաստանը, հետեւելով ԱՄՆ-ին, կծեւավորի էներգակիրների իր ռազմավարական պաշարները:

Այսօր Ռուսաստանը եւ Չինաստանը քննարկում են Դացինով անցնող նավթամուղի կառուցման հարցը: Խնդիրն այն է, որ ռուսական նավթի կարիքն ունեն նաեւ ճապոնիան եւ Հարավային Կորեան, որոնք ակնկալում են, թե նավթամուղը կանցնի Անգարսկ-Նախոդկա ճանապարհով: Այսօր ռուսները փորձում են օգտվել Չինաստանի եւ այդ երկրների միջեւ ծագած մրցակցությունից: Նկատենք, որ չինացիները այդ գործում իրենց հերթին ունեն սեփական խաղաքարտեր: Նրանք մինչեւ վերջերս դեմ էին հանդես գալիս Համաշխարհային առետրական կազմակերպությունում Ռուսաստանի անդամակցությանը: Սակայն Պուտինի վերջերս Պեկին այցելության ժամանակ այդ խնդիրը լուծվել է, ինչը թույլ է տալիս ենթադրել, որ նավթամուղի հարցում նախապատվությունը, ի վերջո, տրվելու է չինական տարբերակին:

Միեւնույն ժամանակ Ռուսաստանը եւ Չինաստանը միմյանց հետ ունեն ռազմավարական նշանակության չլուծված հիմնախնդիրներ: Դեռ 1860թ. կողմերի միջեւ կնքվեց Պեկինյան պայմանագիրը, համաձայն որի Ռուսաստանը, օգտվելով «օպիումային» պատերազմում Չինաստանի՝ անզլիացիներից կրած պարտությունից, իրեն միացրեց Ուսսուրիական երկրամասը եւ այլ տարածքներ, որոնց ընդհանուր մակերեսը չինացիները գնահատում են մոտ 1,5 մլն քառ. կմ: Այդ խնդիրը իր ժամանակ վերակենդանացրեց Մաոն, ինչը եւ առիթ հանդիսացավ 60-ականների վերջին ԽՍՀՄ-ՉԺՀ զինված բախումների (հիշենք Դամանսկի կղզու շուրջ ընդհարումը): Հետագայում Դեն Սյաոպինը հորդորեց չինացիներին մոռացության մատնել կորցրած տարածքների խնդիրը:

Պուտինի պեկինյան վերջին այցի ժամանակ կողմերը հայտարարեցին սահմանային բոլոր խնդիրների իրավական լուծման մասին: Սակայն տարածքային հարցերը, ինչպես հայտնի է, հազվադեպ են վերջնական լուծումներ ունենում: Բնորոշ է, որ առայսօր Չինաստանի դպրոցական դասագրքերում Ուսսուրիական երկրամասը ներկայացվում է որպես չինական տարածք:

Այսօր չինացիները ձգտում են Հեռավոր Արեւելքը նվաճել տնտեսական մեթոդներով եւ վերածել այդ տարածքը իրենց համար հույսալից աղբյուրի, ինչին փորձում են հակազդել ռուսաստանյան իշխանությունները: Նկատենք, որ ռուս-չինական հակասությունների վերոհիշյալ հանգամանքը վարպետորեն փորձում է օգտագործել ԱՄՆ-ը: Մասնավորապես Ռուսաստանի եւ Չինաստանի հարաբերությունների ջերմացման պահերին տեղեկատվական շրջանառության մեջ են դրվում մեծ թվով հոդվածներ եւ վերլուծություններ, որտեղ նկարագրվում են չինացիների կողմից Սիբիրի եւ Հեռավոր Արեւելքի «խաղաղ» նվաճման սցենարներ:

## **ԻՍԼԱՄԱԿԱՆ ՍՐԲԱԶԱՆ ՊԱՅՔԸ՝ ՌԱՄԱԴԱՆ Արաքս Փաշայան**

Իսլամական պահքը (արաբերեն՝ *սոում* կամ *ուրազա*) մահմեդականների հիմնական պարտականություններից եւ իսլամի հինգ սյուներից մեկն է, որոնց թվում են նաեւ՝ միակ աստծո՝ ալլահի եւ նրա մարգարեի անվերապահ ընդունումը, ամենօրյա հնգակի աղոթքը, ուխտագնացությունը սրբազան վայրեր եւ նվիրատվությունն աղքատներին:

Բոլոր օրինապահ մահմեդականները պարտադիր պետք է տարին մեկ անգամ ծոմ պահեն: Իսլամի ոգին պահանջում է անվերապահորեն եւ առանց քննարկման կատարել աստծո պատվիրանները: *Չադիսներում* նշված է. «Կասկածի տակ առնելը արդեն իսկ անհավատություն է»:

Իսլամական պահքը սկսվում է մահմեդական լուսնային օրացույցի իններորդ՝ Ռամադան ամսին: Պահքին որպես հոմանիշ օգտագործվում է նաեւ Ռամադան բառը: Լուսնային տարին, որի հիման վրա կազմվել է մահմեդական օրացույցը, արեւայինից կարճ է գրեթե 11 օրով: Նրա օրերը պայմանականորեն բաշխված են հետեւյալ կերպ. վեց ամիսը՝ 30 եւ մյուս վեց ամիսը՝ 29: Սակայն մահմեդական տարբեր երկրներում դրանց հերթագայությունը չի համընկնում, եւ այդ պատճառով պահքի տեսողությունը մահմեդական աշխարհում տարբեր է: Ռամադանը փոփոխական է. այս տարի այն սկսվեց հոկտեմբերի 15-ին եւ ավարտվեց նոյեմբերի 15-ին:

Պատահական չէ, որ իսլամական պահքը կատարվում է Ռամադան ամսին: Ավանդության համաձայն՝ 610թ. Ռամադանի ուրբաթ օրվա ադամանութին (26-ի լույս 27-ի գիշերը) աստված Գաբրիել (Ջաբրահիլ) հրեշտակապետի միջոցով Մուհամմադին երկնքից իջեցրեց առաջին աստվածային հայտնությունները, որոնք դրվեցին իսլամի սուրբ գրքի՝ Ղուրանի հիմքում: Նախախնամության գիշերը (*Լեյլաթ ալ-կադր*), ինչպես այն հետագայում կոչվեց, անկյունաքարային դարձավ ոչ միայն իսլամի պատմության, այլեւ քաղաքակրթության հետագա ընթացքի համար: 624թ. Մուհամմադ մարգարեն Ռամադանը հայտարարեց պարտադիր պահքի ամիս իսլամադավանների համար: Ամեն տարի *Ռամադան* ամսի 26-ի լույս 27-ի գիշերը կատարվում է համընդհանուր գիշերային աղոթքը:

Շարիաթում բացառիկ մանրամասն են շարադրված պահքի կարգն ու այն խախտելու պայմանները: Ցերեկվա ժամերին, այսինքն՝ արեւածագից մինչեւ արեւամուտ, մահմեդականներին արգելվում է ուտել, խմել, ծխել, հարաբերվել հակառակ սեռի հետ ու տրվել աշխարհիկ զվարճանքների:

Պահանջվում է խուսափել այն ամենից, ինչը կարող է հաճույք պատճառել: Մահմեդականներին չի թույլատրվում ուտելիքից կամ որել է բուրումնավետ նյութից հոտ քաշել, նույնիսկ ծխող մարդու կողքին գտնվել: Պահքի խախտում է համարվում ոչ միայն չնչին քանակությամբ սննդի, ջրի կամ այլ հեղուկի մուտքը բերան, առավել եւս ստամոքս, այլև դեղորայքի ընդունումը, սրսկումը կամ հոգնան: Շարիաթում նշված է, որ չի կարելի է լիզել անգամ շրթունքի վրա ընկած անձրեւի կաթիլը կամ շոգից փրկվելու համար գլուխը ջրի մեջ սուզել: Եթե լույսը վրա հասնելու պահին մահմեդականի բերանում ուտելիք լինի, նա պետք է անմիջապես դատարկի այն: Ռամադանը մեծ դժվարություններ է ստեղծում նրանց համար, ովքեր կերակուր են պատրաստում: Վերջիններս կարող են ուտելիքը միայն ծամել, համտեսել, բայց ոչ երբեք կուլ տալ: Միակ բանը, որ թույլատրվում է կուլ տալ, սեփական թուրքն է:

Սակայն վերը նշված բոլոր արգելքները, ինչպես նշեցինք, գործում են միայն ցերեկվա ժամերին, քանի որ արեւամուտից մինչեւ արեւածագ պահքն ընդհատվում է *իֆտարով* (բառացի՝ թաթախում):

Ղուրանում միայն մոտավորապես է նշված օրվա պահքի տեսողությունը. «...*Կերեք եւ խմեք, քանի դեռ ձեր աչքի առաջ չի սկսել զատվել արեւածագի սպիտակ գիծը սեւ գծից, այնուհետեւ ծոմ պահեք մինչեւ գիշեր...*» (2; 183): Սակայն այժմ մահմեդական երկրներում պահքի սկիզբն ու վերջը որոշվում է ըստ Երկրի ճշգրտությամբ, որի մասին հաղորդվում է ռադիոյով, մանուկով եւ հեռուստատեսությամբ: Այնտեղ, որտեղ ամռանը բեւեռային ցերեկ է, կամ լինում են սպիտակ գիշերներ, անհնար է հետեւել պահքի վերաբերյալ Ղուրանի կանոններին:

Իսլամի պատվիրանների նկատմամբ կույր հավատը առանձին դեպքերում հանգեցրել է ողբերգության: 1916թ. Միջին Ասիայից հազարավոր մահմեդականներ, որ աշխատում էին Սուրմանսկի երկաթուղու շինարարության վրա, Ռամադան ամսին փորձեցին ծոմ պահել: Օրերն անցնում էին, բայց գիշերը վրա չէր հասնում: Քաղցից տանջահար եւ ուժասպառ մարդկանց բացատրում էին, որ ամռանը Յյուսիսում գիշեր չի լինում: Սակայն նրանք պնդում էին, որ ամեն ինչ ալլահի կամքով է: Եթե նա ուզում է պատժել, ուրեմն գիշեր չի լինի, եթե ցանկանա գթալ, գիշեր կբերի: Ի վերջո, նրանցից շատերը մահացան:

Շարիաթում նշված են պահքի պահանջները անտեսող թույլատրելի պատճառները: Ռամադանը պարտադիր չէ հիվանդների, հղի եւ ստնտու կանանց, փոքր երեխաների, զառամյալ ծերերի, մարտնչող զինվորների եւ ճանապարհորդների համար: Սակայն բոլորը, բացառությամբ երեխաների, զառամյալ ծերերի եւ անբուժելի հիվանդների, ովքեր շրջանցել են պահքը, պարտավոր են լրացնել այն՝ հարգելի պատճառի վերացումից

հետո՝ աղքատներին ողորմություն տալով կամ որեւէ մեկ այլ ամիս ծոն պահելով: Սակայն անգամ հարգելի պատճառով պահքից ազատվածները պետք է Ռամադանի օրերին զուսպ կեցվածք ունենան, խուսափեն հրապարակային սնվելուց եւ հնարավորինս զերծ մնան աշխարհիկ հաճույքներից:

Հատուցման պարտքն ընկած է նաեւ նրանց վրա, ովքեր չեն դիմացել եւ խախտել են Ռամադանը: Պահքի ամենափոքր խախտումը անընդունելի է դարձնում այն: Համաձայն շարիաթի՝ քավության պահքը կարելի է փոխհատուցել վաթսուներորդ ծոնապահությանը կամ աստվածահաճո գործեր կատարելով: Մահմեդականը կարող է ողջ օրվա ընթացքում կերակրել վաթսուս աղքատի կամ վաթսուն օր՝ մեկ աղքատի:

Ռամադանը, բացի մարմնական ապաշխարանքից, ունի առավելապես հոգեւոր կողմ: Պահքը մահմեդական հավատացյալին պարտադրում է բարոյական ինքնազսպում եւ առաջին հերթին ծառայում է հավատքի ամրապնդմանը: Այդ շրջանում, առավել քան երբեւէ, դատապարտելի է հայիոյելը, ստելը, չարախոսելը, զրպարտելը, բանսարկություններով ու խարդավանքներով զբաղվելը: Հավատացյալի մտքերն ամբողջովին պետք է ուղղված լինեն առ աստված: Նա պետք է խորհի աստծո եւ հոգեւոր հարցերի շուրջ, ընթերցի Ղուրան, փորձի հարթել հնարավոր վիճաբանությունները, ողորմություն բաժանի, մզկիթում հոգեւոր քարոզ լսի եւ աստծո մասին զրույցներ վարի: Մահմեդական ժամանակակից հեղինակ Սեյիդ Յուսեյն Նասրի կարծիքով՝ պահքի ընթացքում մարդը ներքին մաքրության եւ մեկուսացվածության միջոցով պայքարում է արտաքին աշխարհի կրքերի եւ գայթակղությունների դեմ, որ պահանջում է ասկետիզմ եւ ներքին կարգուկանոն:

Մահմեդական աստվածաբանները նշում են, որ պահքը ունի ինչպես առողջապահական, այնպես էլ՝ սոցիալական նշանակություն: Ունեւոր մարդիկ անոթի վիճակում ավելի խոր կարող են հասկանալ կյանքի փիլիսոփայությունը:

Պահքի ծիսակարգի պահպանմանը հետեւում են կրոնական ոստիկանությունը եւ հատուկ մարմինները: Միմյանց հսկում են հենց իրենք՝ մահմեդականները: Պահքի հրապարակային խախտումը կարող է հանգեցնել մահմեդականի բարոյազրկմանը եւ լուրջ խնդիրներ հարուցել նրա համար՝ ընդհուպ մինչեւ պատժի սահմանում՝ այդ երկրի օրենքների համաձայն:

Որպես կանոն՝ Ռամադանի շրջանում մահմեդական երկրներում ուժեղանում են կրոնական տրամադրություններն ու միտումները: Մամուլում, հեռուստատեսային եւ ռադիոհաղորդումներում ավելի մեծ տեղ են հատկացվում կրոնական հիմնահարցերին:

Մահմեդական առանձին երկրներում (մասնավորապես՝ Սաուդյան Արաբիայում եւ Ծոցի երկրներում) Ռամադանի ժամերին ոչ մահմեդականներին (զբոսաշրջիկներին, տարագնա աշխատողներին կամ տեղացիներին) արգելվում է հրապարակային կերպով սնվելը, ծխելը կամ խմելը, ինչը նրանք պետք է անեն աննկատ, հակառակ դեպքում կհետապնդվեն:

Ռամադանի օրերին հասարակական վայրերում, ընդհանուր առմամբ, արգելվում է ալկոհոլային խմիչքների եւ ծխախոտի վաճառքը (մահմեդական առանձին երկրներում, անկախ Ռամադանից, ընդհանրապես արգելված է ալկոհոլային խմիչքների վաճառքը):

Ռամադան ամիսն ավարտվում է թաթախման տոնակատարությամբ, որ կոչվում է *իդ ալ-ֆիտր* (կամ *ուրագա բայրամ*): *Իդ ալ-ֆիտրը* մահմեդական աշխարհում նշվում է մեծ շուքով:

Թաթախման տոնը սկսվում է տասներորդ՝ *շաուվալ* ամսի առաջին օրը ընդհանուր աղոթքով եւ շարունակվում է 3-4 օր: Դրա ծիսակարգի մեջ են մտնում տոնական հացկերույթը եւ աղքատներին ողորմություն բաժանելը: Մահմեդականներն այդ օրերին, որպես կանոն, այցելում են հարազատներին, բարեկամներին ու ընկերներին, միմյանց նվերներ հանձնում:

Ռամադանը, որ բացառիկ կարեւոր նշանակություն ունի մահմեդականների համար, սրբազան ամիս է համարվում: Պատերազմական վիճակում գտնվող մահմեդականները, սովորաբար, այդ ընթացքում դադարեցնում են ռազմական գործողությունները:

Ակնկալվում էր, որ այս տարվա Ռամադանի ընթացքում ինչ-որ չափով կթուլանա լարվածությունը մահմեդական աշխարհի ամենապայթուցանավտանգ շրջաններից մեկում՝ Իրաքում: Սակայն նախորդ տարվա նման այս անգամ նույնպես Իրաքում տեղի ունեցան մի շարք ահաբեկչական գործողություններ: Ռուսաստանի մուֆթիների խորհրդի առաջնորդ Ռավիլ Ղայնուտդինը Ռամադանին նվիրված մամուլի ասուլիսում մասնավորապես նշեց. «Եթե որեւէ մեկն ահաբեկչություն է իրականացնում Ռամադանի ժամանակ, ուրեմն հավատք չունի»:

Հասկանալի է, որ ոչ բոլոր մահմեդականներն են անշեղորեն հետեւում Ռամադանի կանոններին, սակայն ժամանակակից մահմեդական աշխարհում դրանք հիմնականում գործում են՝ իրենց ավանդական նշանակությունը չկորցնելով:



**ԱԶԳՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՄԱՐԴԿՈՒԹՅՈՒՆԸ**  
(հատված «Ռուսաստանի ճակատագիրը» գրքից)  
*Նիկոլայ Բերդյաեւ*

1. Մտքի աշխատանքը ազգության խնդրի վերաբերյալ պետք է առաջին հերթին հաստատի, որ ազգության եւ մարդկության, ազգային բազմազանության եւ համամարդկային միասնականության հակադրությունը ե՛լ անհնար է, ե՛լ անիմաստ:

Ազգությունը եւ պայքարը նրա գոյության ու զարգացման համար՝ չի նշանակում երկպառակություն մարդկության մեջ եւ մարդկության հետ: Այն սկզբունքորեն չի կարելի դիտարկել որպես միասնականության չեկած մարդկության համար բնորոշ, անկատար մի վիճակ, որն իբր ենթակա է անհետացման՝ կատարյալ միասնության հասնելու ժամանակ:

Ազգությունը անհատական գոյություն է, որից դուրս անհնար է մարդկության գոյությունը. այն իր հիմքն ունի կյանքի ամենախորքերում եւ պատմության մեջ արարվող արժեք է: Մարդկության գոյությունը նրա առանձին մասերի ազգային գոյության ձեւով՝ ամենեւին էլ չի նշանակում փոխադարձ թշնամանքի եւ բնաջնջման կենդանաբանական ու ստորին մի վիճակ, որն իբր անհետանում է հումանիզմի եւ միասնականության աճին զուգընթաց:

Ազգությունը ունի հավերժ էաբանական հիմք եւ հավերժ արժեքային նպատակ: Ազգությունը գոյաբանական անհատականություն է, գոյի հիերարխիկ աստիճաններից մեկը, մի այլ աստիճան, քան մարդու անհատականությունը եւ մարդկության՝ որպես մի տեսակ ժողովյալ անձի անհատականությունը:

Մարդկությունը դրական համամիասնություն է, եւ այն պիտի դառնար դատարկ վերացականություն, եթե իր գոյությամբ վերացներ իր մեջ մտնող բոլոր աստիճանների ազգային եւ առանձին մարդկային անձերի անհատականությունների գոյությունը: Նույնիսկ Աստուծո արքայությունում պետք է պատկերացնել ազգային եւ մարդկային անհատականությունների կատարյալ ու գեղեցիկ գոյությունը: Ցանկացած գոյություն անհատական է: Վերացականությունը՝ չգոյություն է: Հումանիզմում, որը վերացարկված է ամեն տեսակ որոշակի բազմազանությունից, չկա հոգու կենդանի ներկայություն, կա դատարկություն: Նույն ինքը՝ մարդկությունը, բարձրագույն հիերարխիկ աստիճանի որոշակի ժողովյալ անհատականություն է, այլ ոչ թե վերացական, մեխանիկական գումար: Նույնպես եւ Աստված, ոչ թե

բազմազան գոյի բոլոր անհատական աստիճանակարգերի թուլացումն է ու վերացումը, այլ՝ նրանց ամբողջությունն է, կատարելությունը:

Տիեզերաքաղաքացիությունը (կոսմոպոլիտիզմ) հիմնադրվել է եւ փիլիսոփայության, եւ կյանքի տեսակետից. այն իրենից ներկայացնում է միայն վերացականություն եւ ուտոպիա, վերացական կատեգորիաների կիրառում այնպիսի բնագավառում, ուր ամեն ինչ որոշակի է: Տիեզերաքաղաքացիությունը չի արտացոլում իր անվանումը. նրա մեջ չկա ոչինչ տիեզերական, քանզի տիեզերքը, աշխարհը կոնկրետ անհատականություն է եւ հիերարխիկ աստիճաններից մեկը:

Տիեզերական կյանքին մարդը հաղորդակից է դառնում բոլոր անհատական հիերարխիկ աստիճանների միջոցով, այդ թվում՝ ազգային կյանքի միջոցով: Տիեզերաքաղաքացիությունը միացյալ եւ կատարյալ մարդկության մասին երազանքի տգեղ ու անիրականանալի արտահայտությունն է, կոնկրետ եւ կենդանի մարդկության փոխանակումը վերացական ուտոպիայով: *Ով չի սիրում իր ժողովրդին եւ ուն հաճելի չէ նրա կենդանի պատկերը՝ նա չի կարող սիրել եւ մարդկությունը:*

Վերացականությունները ծնուն են վերացականություններ: Վերացական զգացմունքները տիրում են մարդուն եւ անհետացնում են նրա տեսադաշտից կենդանի ամեն մի բան: Տիեզերաքաղաքացիությունը նաեւ անհատականության արժեքի ժխտումն է. դա քարոզ է վերացական մարդու եւ վերացական մարդկության:

**2.** Մարդ-անհատը մարդկության մասն է կազմում ոչ թե որպես վերացական մարդ, այլ՝ որպես ազգային մարդ՝ որպես ռուս, ֆրանսիացի, գերմանացի կամ անգլիացի: Մարդը չի կարող ցատկելով անցնել գոյի ամբողջ մի աստիճան: Դրանից նա կաղքատանար եւ կդատարկվեր: *Ազգային մարդը ավելի մեծ է, քան ուղղակի մարդը. նրանում կան թե՛ մարդկային ցեղի ընդհանրական գծերը, թե՛ ազգային անհատական գծերը:* Կարելի է ցանկանալ ռուսների, ֆրանսիացիների, գերմանացիների եւ երկրագնդի բոլոր ժողովուրդների եղբայրություն ու միասնություն, բայց չի կարելի ցանկանալ, որպեսզի երկրագնդի երեսից անհետանան ազգային դիմագծերը, ազգային հոգեւոր տիպերը եւ մշակույթները: Մարդու եւ մարդկության մասին այդպիսի երազանքը, որը վերացարկվում է ազգայինից, արժեքների եւ հարստությունների ամբողջ մի աշխարհի անհետացման ցանկություն է: Մշակույթը երբեք չի եղել ու չի լինի վերացական մարդկային. այն ազգային, անհատական-ժողովրդական է եւ միայն իր այդ որակի մեջ կարող է հասնել համամարդկային մակարդակի: Ամբողջապես ոչ ազգային, վերացական մարդկային, ժողովրդից ժողովուրդ հեշտ փոխանցվող՝ հանդես է գալիս մշակույթի նվազ ստեղծագործ, արտաքուստ տեխնիկական կողմը:

Ամեն մի մշակութային ստեղծագործությունն իր վրա կրում է ազգային հանճարի կնիքը: Նույնիսկ մեծ տեխնիկական գյուտերը ազգային են. ազգային չէ միայն մեծ գյուտերի կիրառումը, որը հեշտությամբ յուրացվում է բոլոր ժողովուրդների կողմից: Նույնիսկ գիտական հանճարը, նախաձեռնող, արարող մեթոդը, ազգային են: Դարվինը կարող էր միայն անգլիացի լինել, իսկ Չեչնիովցը տիպիկ գերմանացի էր: Մշակույթի մեջ ազգայինն ու մարդկայինը չեն կարող հակադրվել: *Չենց ազգային ստեղծագործման զագաթներն են, որ ունեն համամարդկային նշանակություն:* Ազգային հանճարի մեջ բացահայտվում է համամարդկայինը. իր անհատականի միջոցով նա ներթափանցում է ունիվերսալի (համապարփակի) մեջ: Դոստոևսկին ռուս հանճար է. ազգային պատկերը դրոշմված է նրա ողջ ստեղծագործության վրա: Նա աշխարհին բացում է ռուսական հոգու խորքերը: Բայց նա,- որը ամենառուսականն է ռուսներից,- նաե՛լ ամենահամամարդկայինն է ու ամենաընդհանրականը ռուսների մեջ: Ռուսական խորքի միջոցով նա բացահայտում է համաշխարհային, համամարդկային խորքերը: Նույնը կարելի է ասել ցանկացած հանճարի մասին: Նա միշտ ազգայինը հասցնում է համամարդկային նշանակության:

Չունական մշակույթը, Վերածննդի իտալական մշակույթը, ֆրանսիական եւ գերմանական մշակույթները իրենց ծաղկման շրջանում. սրանք են միասնական մարդկության համաշխարհային մշակույթի ուղիները, բայց նրանք բոլորն էլ խոր ազգային են, անհատական-առանձնահատուկ: Բոլոր ազգային մեծ մշակույթները իրենց նշանակությամբ համամարդկային են, իսկ համահարթեցնող քաղաքակրթությունը՝ դիմազուրկ է:

Գոյի տիեզերական ողջ ուղին անհատականությունների համաշխարհային հիերարխիայի տարբեր աստիճանների բարդ համագործակցություն է, մի հիերարխիայի ներդաշնակ ներթափանցումը մյուսի մեջ. *անհատի ներթափանցումը՝ ազգի, ազգի ներթափանցումը՝ մարդկության, մարդկության ներթափանցումը՝ տիեզերքի, տիեզերքի ներթափանցումը՝ Աստծո մեջ:*

Ազգը դինամիկ սուբստանցիա է, այլ ոչ թե անցողիկ պատմական ֆունկցիա. իր արմատներով նա հասնում է կյանքի խորհրդավոր խորքերը: Ազգությունը գոյի դրական հարստացումն է, եւ նրա համար պետք է պայքարել որպես արժեքի: Ազգային միասնությունը ավելի խորն է, քան դասակարգերի, կուսակցությունների եւ ժողովուրդների կյանքում բոլոր այլ անցողիկ պատմական գոյացումների միասնությունը: Եվ ստեղծագործելու ցանկություն ունենալ ազգությունից դուրս՝ մեծագույն ինքնախաբեություն է:

**3.** Ազգության ռացիոնալ սահմանման բոլոր փորձերը բերում են անհաջողության: Ազգության էությունը չի կարելի սահմանել որևէ ռացիոնալ-ըմբռնելի հատկանիշներով: Ո՛չ ռասան, ո՛չ տարածքը, ո՛չ լեզուն եւ ո՛չ կրոնը չեն կարող հանդես գալ որպես ազգությունը սահմանող հատկանիշներ, չնայած նրանք բոլորն էլ խաղում են այս կամ այն դերը նրա սահմանման մեջ: Ազգությունը բարդ պատմական կազմավորում է: Նա ձևավորվում է հոգեւոր-մշակութային գործընթացի արդյունքում, որը արարում է նրա անկրկնելի հոգեւոր դիմագիծը՝ նաեւ ռասաների ու ցեղերի արյունակցական խաչասերման, տարածքների բազմաթիվ վերաբաշխումների արդյունքում: Եվ բոլոր պատմական ու հոգեբանական հետազոտությունների արդյունքում մնում է այն չտարրալուծվող ու անորսալի մնացորդը, որի մեջ եւ թաքնված է ազգային անհատականության ողջ խորհուրդը: Ազգությունը խորհուրդ է, նա խորհրդավոր է եւ անըմբռնելի (իռացիոնալ), ինչպես եւ ցանկացած անհատական գոյություն: Պետք է լինել ազգության մեջ, մասնակցել նրա ստեղծագործական կենսական գործընթացին՝ նրա խորհուրդը մինչեւ վերջ ճանաչելու համար:

Ազգային մշակույթների եւ կյանքի տիպերի ստեղծագործությունը չի հանդուրժում օրենքով պարտադրված արտաքին, ստիպողական կանոնակարգում: Նա ազատ է, եւ նրա մեջ կա ստեղծագործական կամայականություն: Փարիսեցիական, պաշտոնական, արտաքնապես պարտադրված ազգայնականությունը միայն նեղում է ազգային առաքելությունը եւ ժխտում ազգային գոյության անըմբռնելի խորհուրդը: Փարիսեցիական ազգայնականությունը եւ փարիսեցիական հումանիզմը՝ երկուսն էլ նույն ձեւով ճնշում են ստեղծագործական ճիգը, երկուսն էլ թշնամական են ազգային գոյության ըմբռնմանը:

Ցանկացած ազգային գոյության աճն ու զարգացումը չպետք է դիտարկվի որպես անցում ազգային ինքնատիպությունից դեպի ինչ-որ ինտերնացիոնալ եվրոպական քաղաքակրթություն, որպիսին առհասարակ գոյություն չունի: Դիմազրկող եվրոպականությունը, միջազգային քաղաքակրթությունը դատարկ վերացարկումներ են:

*Կա միայն մեկ պատմական ուղի, որը տանում է դեպի բարձրագույն համամարդկայնություն, դեպի մարդկության միասնականություն. դա ազգային զարգացման, ազգային ստեղծագործության ուղին է: Համամարդկայինը բացահայտում է իրեն միայն ազգային ձեւով: Ապագայնացումը, որը համակված է ինտերնացիոնալ եվրոպայի, միջազգային քաղաքակրթության, միջազգայնական մարդկության գաղափարներով, դատարկ գաղափար է: Իմ ազգության եւ իմ անհատականության միջեւ ընկած չէ ո՛չ մի ինտերնացիոնալ եվրոպա, ո՛չ մի միջազգային քաղաքակրթություն:*

## ԳԱՂՏՆԻ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆ

Գաղտնի միությունները գոյություն ունեն եթե ոչ աշխարհի արարման սկզբից, ապա միջնադարից՝ հաստատ: Տաճարականներ (թամվիլիերներ), ռոզենկրեյցականներ, իլյումինատներ, մասոններ. արտասովոր անվանումներով ուխտերի, միաբանությունների եւ օթյակների այս ցանկը կարելի է անվերջորեն շարունակել: Դրանցից մի քանիսն այսօր էլ կան, սակայն հարկ չկա չափազանցել նրանց (թեկուզ նույն մասոնների) ազդեցությունը նորագույն պատմության ընթացքի վրա: Այլ են նոր կազմակերպությունները: Ֆինանսիստների, օլիգարխների ու քաղաքական գործիչների՝ ռոմանտիկ քողից եւ միստիկականությունից զուրկ այս ակումբներն իրենց նախորդներից փոխ են առել ամենազվխավորը՝ գաղտնիությունը:

Այն զգացումը, թե աշխարհում ամեն ինչ վերահսկվում է միասնական ուժի կողմից, ամենատարբեր մարդկանց մոտ՝ անկախ նրանց աստիճանից ու քաղաքական հակումներից, վաղուց է առաջացել: Համաշխարհային կառավարության կոչմանը հավակնում են իշխանության ոչ պաշտոնական կենտրոններ, գաղտնի կազմակերպություններ:

Համաշխարհային կառավարության գաղափարը վաղուց է դուրս եկել ֆանտաստիկ վեպերի թեմաների շրջանակներից, եւ այնպիսի պաշտոնական միջազգային կազմակերպություններ, ինչպիսիք են ՄԱԿ-ը, ՅՈՒՆԵՍԿՕ-ն, Փարիզյան եւ Հռոմյան ակումբները, ինչպես նաեւ նույն Դավոսյան ֆորումը, որոշ չափով կարելի է դասել Համաշխարհային կառավարության շարքը:

Դեռ միջին դարերում առաջացավ մի կազմակերպություն՝ մասոնությունը, որի մասին լսել էին բոլորը, բայց որի մասին ոչ ոք ոչինչ չգիտեր: Մասոնության գաղափարախոսներից Ալբերտ Փայքն ասել է. *«Մասոնների նպատակն է՝ դառնալ աշխարհի տերերի տիրակալներ: Գաղտնի իշխանություն՝ իշխանության ետեւում»*: Իր հերթին, գաղտնի կազմակերպությունների թունդ քննադատ, բրիտանական հետախուզության կադրային սպա Ջոն Քոլեմանը փորձում էր ապացուցել, որ հենց *«այդ ուժն իրականացրեց բոլշեհիկյան հեղափոխությունը Ռուսաստանում, սանձազերծեց Առաջին ու Երկրորդ աշխարհամարտերը, Կորեայի եւ Վիետնամի պատերազմները, կազմակերպեց Ռոդեզիայի, Հարավային Աֆրիկայի, Նիկարագուայի ու Ֆիլիպինների ճգնաժամերը»*: Նրա կարծիքով, այդ կազմակերպությունն իր ձեռքն է վերցրել աֆրիկյան մայրցամաքի հանածո պաշարներն ու թմրանյութերի ողջ առեւտուրը:

Առանձին էնտուզիաստ հետազոտողներ, կրկնելով Քոլեմանին,

գտնում են, որ «համաշխարհային կառավարմանը» մասնակից են «գաղտնի» կառավարություններից ամենաճանաչվածները՝ «Միջազգային հարաբերությունների խորհուրդը», «Բիլդերբերգյան ակումբը» եւ «Եռակողմ հանձնաժողովը»:

ԱՄՆ նախկին կոմունիստական լիդերներից Մորիս Մելքիսի խոսքերով՝ խորհրդային մի գործակալ իրեն ժամանակին ցուցում է տվել. *«...փորձել սողոսկել այդ կազմակերպությունների մեջ, անհրաժեշտության դեպքում նրանց կարողությունները վերցնել իրենց ձեռքը, որպեսզի ի վիճակի լինեն ֆինանսավորել կոմունիստական կուսակցության քարոզչությունը Միացյալ Նահանգներում...»:*

\* \* \*

1921թ. Նյու Յորքում հիմնված **«Միջազգային հարաբերությունների խորհրդին»** (ՄՀԽ) հաճախ մեղադրում են ներպետական դավերի, վարչակազմերի փոփոխության մեջ: Որոշ տվյալներով, ՄՀԽ-ն կազմված է հասարակության ընտրախավը ներկայացնող ավելի քան 2000 անդամներից: ՄՀԽ հիմնադիրներից են Ջոն Ֆոսթեր Դալեսը, որը նախագահ էլզենհաուերի օրոք դարձավ պետքարտուղար, նրա հաջորդ Քրիստիան Չերթերը եւ Ալեն Դալեսը (հետագայում՝ ԿՀՎ տնօրեն): Չնայած այս «աղմուկ հանած» անուններին, ամերիկացիները ՄՀԽ մասին քիչ բան գիտեն: Խիստ կանոնադրական օրենքներով՝ կազմակերպության հանդիպման վայրը եւ դրա բովանդակությունը հրապարակող անդամն անմիջապես հեռացվում է ՄՀԽ-ից: «Միջազգային հարաբերություններ» (Foreign Affairs) հանդեսի միջոցով ՄՀԽ-ն հաճախ է փորձել ամերիկացիների շրջանում տարածել համաշխարհային կառավարության գաղափարը, որն իր վրա կվերցնի համաշխարհային կարգուկանոնի եւ բոլոր խնդիրների լուծման պատասխանատվությունը: Համաշխարհային կառավարության հսկողության տակ պիտի լինեն համաշխարհային բանկային մենաշնորհը եւ, համապատասխանաբար, հարկային համակարգը:

Շատ տարիների ընթացքում ՄՀԽ-ն երկրի ղեկավար կադրերի համալրման մշտական աղբյուր էր: Ամերիկյան որոշ թերթերի տվյալներով, ԿՀՎ 11 տնօրեններից 7-ը, 16 պետքարտուղարներից 12-ը, ֆինանսների 18 նախարարներից 12-ը, պաշտպանության 15 նախարարներից 9-ը, նախագահի մի շարք խորհրդականներ ու Եվրոպայում ՆԱՏՕ զորքերի գլխավոր հրամանատարներ հանդիսացել են ՄՀԽ անդամներ: ՄՀԽ ներկայացուցիչներ կան ինչպես դեմոկրատների, այնպես էլ հանրապետականների շրջանում: Որպեսզի «ձեռքում պահի» հասարակական կարծիքը, ՄՀԽ-ն հսկողություն է սահմանել ազգային առաջատար հեռուստաալիքների եւ տպագիր լրատվամիջոցների վրա:

\* \* \*

**«Բիլդերբերգյան ակումբի»** հիմնադիրը Յոզեֆ Ռետինգերն է: Ակումբի հիմնադրման տարեթիվը հայտնի չէ, սակայն նրա մասին առաջին անգամ խոսեցին 1954թ., երբ ճարպիկ լրագրողները հոլանդական Օսթերբեք քաղաքի Բիլդերբերգ հյուրանոցում «հայտնաբերեցին» աշխարհի ամենաազդեցիկների եւ ամենահարուստների հավաքույթը: Հյուրանոցից էլ առաջացավ կազմակերպության անվանումը: Ակումբի առաջին նախագահը եղել է Օրանյան հարստության ներկայացուցիչ, թագաժառանգ Բեռնհարդը՝ Նիդեռլանդների նախկին թագուհի Յուլյանայի ամուսինը, որի կարողությունը գնահատվում է 2 մլրդ դոլար:

Ինչպես մյուս գաղտնի կազմակերպությունները, այն նույնպես շատ փակ է: Ակումբի անդամները տարին մեկ-երկու անգամ հանդիպում են որեւէ աչքի չընկնող, բայց բարձրակարգ առողջարանում: Հանդիպումների վայրը, ժամանակը եւ բովանդակությունը գաղտնի են պահվում: Այդպիսի հանդիպումներում ընդունված որոշումները պաշտոնական չեն, սակայն պարտադիր են կատարման համար: Հաճախ այդ «ֆորումներին» հրավիրվում են տարբեր երկրների ղեկավարներ: Այստեղ հասցրել են երեւալ նաեւ ռուսները: Օրինակ, bilderberg.org ինտերնետային կայքի տվյալներով, 1998թ. բիլդերբերգականների նիստին մասնակցել է այդ օրերի Ռուսաստանի առաջին փոխվարչապետ Անատոլի Չուբայսը: Ըստ լուրերի, նիստերից մեկում շրջանառվել է մի համաձայնագրի տեքստ, որտեղ Ռուսաստանը բաժանվում էր հսկողության մի քանի գոտիների. Կենտրոնն ու Սիբիրը անցնում էին ԱՄՆ-ին եւ Անգլիային, Հարավն ու Պոլվոլթիեն՝ Թուրքիային, Հեռավոր Արեւելքը՝ ճապոնիային, իսկ Հյուսիս-Արեւմուտքը՝ Գերմանիային:

Ակումբի նիստերի մասնակիցներ են եղել Հենրի Թիսինջերը, Ջերալդ Ֆորդը, Հելմուտ Շմիդտը, Դեւիդ Ռոքֆելլերը, բարոն Ռոտշիլդը, Մարգարետ Թետչերը եւ Ամերիկայի ու Եվրոպայի շատ ուրիշ ազդեցիկ եւ հարուստ գործիչներ: Լրագրողները պարզել են, որ նրա ֆինանսական սնման թելերը տանում են դեպի այն ֆոնդերը, որոնք ազատված են հարկային մուծումներից:

\* \* \*

1973թ. դեկտեմբերի 13-ին ամերիկյան մի հեռուստաալիքով հանդես եկավ հարավային փոքրիկ նահանգի սակավաճանաչ նահանգապետը, որի մասին ոչ ոք համարյա ոչինչ չէր լսել: Անցավ 3 տարուց էլ պակաս ժամանակ, եւ այդ մարդը ողջ աշխարհին հայտնի դարձավ որպես ԱՄՆ

նախագահ: Դա Ջիմի Քարթերն էր: Իր նախընտրական խոստումներում Քարթերը ժողովրդին խոստացավ իշխանությունից հեռացնել «Միջազգային հարաբերությունների խորհրդին» եւ «Բիլդերբերգյան ակումբին»: Նա իր խոստումը պահեց. Սպիտակ տան աշխատասենյակները զբաղեցրին նոր, բոլորին անհայտ ինչ-որ «**եռակողմ հանձնաժողովի**» (ԵՅ) անդամները, որը կոչվում էր նաեւ Թրիլաթերալ: Սակայն, ինչպես հետագայում պարզվեց, Թրիլաթերալի հիմնադիրներից շատերը ՄՅԽ եւ Բիլդերբերգյան ակումբի անդամներ էին:

ԵՅ առաջին համաժողովը կայացել է 1972թ., ՄՅԽ նախագահ Դեւիդ Ռոքֆելերի ամառանոցում: Թրիլաթերալի կազմում մտնում էին ԱՄՆ, ճապոնիայի եւ Արեւմտյան Եվրոպայի (այդ իսկ պատճառով էլ՝ եռակողմ) ներկայացուցիչները: Թրիլաթերալի նպատակը առավել ճիշտ է արտահայտել սենատոր Բարի Յոլդուոթերն իր «Առանց որեւէ զղջման» գրքում. *«Այն համաշխարհային տնտեսական իշխանության ստեղծածն է՝ վերկանգնած նասնակից երկրների քաղաքական կառավարություններից, եւ այն պիտի ղեկավարի աշխարհը»:*

Ռոքֆելերի հետ հանդիպումից 3 տարի անց Քարթերին ընտրեցին նախագահ: Կարելի է կասկածել ոմն մեկին նախագահ «դարձնելու» Ռոքֆելերի հնարավորությանը, բայց այն, որ միայն 1973թ. նա, երկրում չզբաղեցնելով որեւէ ղեկավար դիրք, հանդիպել է 27 պետությունների, այդ թվում՝ ԽՍՀՄ եւ Չինաստանի ղեկավարների հետ, պարզորոշ խոսում է նրա վիթխարի ազդեցության մասին:

Թրիլաթերալի գործադիր տնօրեն Ջեյմս Բեյզինսկին Քարթերի օրոք ազգային անվտանգության ղեկավարն էր: Իր «Երկու դարերի արանքում» գրքում Բեյզինսկին միտք է հայտնում, թե ավելի լավ է աշխարհում միասնական հասարակություն ստեղծել ոչ թե տարբեր պետությունների «միաձուլմամբ», այլ «անուղղակի», այսինքն՝ ոչ պաշտոնական կապերի օգնությամբ: Խոսելով սոցիալական կարգավորման մասին՝ «զլոբալ ռազմավարը» նախատեսում է նույնիսկ բնակչության, երեխաների սեռի, եղանակի ու քաղաքացիների ժամանցի կանոնավորման միջոցները:

ԵՅ հիմնական ֆինանսական օժանդակությունը ստացվում է Ֆորդի հիմնադրամից՝ նվիրատվությունների տեսքով: Թրիլաթերալի «նվաճումներից» են համարվում այնպիսի «ծառայություններ», ինչպիսիք են աֆրիկյան մի շարք պետությունների կառավարությունների տապալումը, 1980թ. Նիկարագուայում պետական հեղաշրջումը եւ այլն:



## **Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն**

<b>Ռուբեն Խուրշուդյան</b>	
<b>ՏՆՏԵՍԱԿԱՆ ԸՆՏՐԱՆՈՒ ՄԱՍԻՆ</b> .....	<b>1</b>
<b>Արսեն Հակոբյան</b>	
<b>ՀՅՈՒՄԻՍԱՅԻՆ ԿՈՎԿԱՍԻ</b>	
<b>ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ</b> .....	<b>6</b>
<b>Կարեն Վերանյան</b>	
<b>ՎՐԱՍՏԱՆԻ ՌԱԶՄԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ</b>	
<b>ՇՐՋԱՆԱԿՆԵՐԸ</b> .....	<b>13</b>
<b>Գագիկ Տերտերյան</b>	
<b>ԱՄՆ ՆԱԽԱԳԱՀԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՋ</b> .....	<b>19</b>
<b>Գագիկ Տեր-Հարությունյան</b>	
<b>ՉԻՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՆ</b> .....	<b>22</b>
<b>Արաքս Փաշայան</b>	
<b>ԻՍԼԱՄԱԿԱՆ ՍՐԲԱԶԱՆ ՊԱՀՔԸ՝ ՌԱՄԱԴԱՆ</b> .....	<b>29</b>
<b>Նիկոլայ Բերդյաեւ</b>	
<b>ԱԶԳՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՄԱՐԴԿՈՒԹՅՈՒՆԸ</b> .....	<b>33</b>
<b>ԳԱՂՏՆԻ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆ</b> .....	<b>37</b>

*Շապիկի վրա պատկերված է  
ԽՈՒՍՏՈՒՎԻ ԼԵՂՂ*

«ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ», Հայաստանի  
Հանրապետական կուսակցության հրատարակություն  
**Խմբագրական խորհուրդ**  
Երեւան, 375010, Մելիք-Աղամյան 2: Հեռ. 58 04 91, 58 04 83:  
Էլ. փոստ՝ hanrapetakan@hkh.am:  
Հիմնադիր՝ Հայաստանի Հանրապետական կուսակցություն:

Թուղթը՝ օֆսեթ, ֆորմատը՝ 70×108 1/16:  
Պայմանական 3,25 մամուլ: Տպաքանակը՝ 1000:  
Տառատեսակը՝ «Arial Armenian» եւ «Vs Helvetica»:  
Վկայական՝ Օ1Մ 000176:  
Տպագրվել է «Ամարաս» տպարանում: